

27(350)
22.08.2013

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԱՐՑԱԽԻ ՊԵՏՐԱՍԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՅԱՑԱՆ

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հայտարարած մրցույթի համաձայն՝ օգոստոսի 14-ին տեղի ունեցավ Արցախի պետական համալսարանի ռեկտորի ընտրություն: Այդ կապակցությամբ հրավիրված ԱրՊՀ խորհրդի նիստին, որը վարում էր խորհրդի նախագահ, ԼՂՀ վարչապետ Արա Չարությունյանը, 28 անդամներից մասնակցում էր 27-ը:

Արա Չարությունյանը նիստի մասնակիցներին նախ տեղեկացրեց, որ սահմանված ժամկետում ռեկտորի թափուր պաշտոնի համար հայտագրվել է երկու թեկնածու՝ Մանուշ Մինասյանը և Հովիկ Մուսայելյանը: Իսկ խորհրդի քարտուղար Անահիտ Պողոսյանը ներկայացրեց ռեկտորի ընտրության ընթացակարգը՝ միաժամանակ նշելով, որ հայտագրված թեկնածուների փաստաթղթերը համապատասխանում են ներկայացվող պահանջներին: Ըստ սահմանված կարգի՝ ռեկտորի թեկնածուները պարտավոր էին ներկայացնել համալսարանի զարգացման վերաբերյալ իրենց ծրագրերը:


Խորհուրդն առաջինը լսեց թեկնածու Մանուշ Մինասյանի ծրագիրը: ԱրՊՀ-ն հանդիսանում է Արցախի բարձրագույն կրթության ոլորտի առաջատարը, ուստի համալսարանը պետք է ապահովի կրթական բարձր չափորոշիչներ, խրախուսի ուսանողների ու դասախոսների՝ կատարելության հասնելու ձգտումը, նշեց Մ. Մինասյանը: Կրթական գործունեության արդիականացման շրջանակում նա կարևորեց բակալավորի և մագիստրոսի ծրագրերի մասնագիտությունների ճշգրտումը: Պետք է կրճատել չկայացած, զարգացման հեռանկար չունեցող և համալսարանի իրական հնարավորություններից վեր մասնագիտությունները: Մ. Մինասյանի խոսքով՝ ձգտելով արդիականացնել կրթական ծրագրերը և շրջանավարտներին ապահովելով ապագա աշխատանքի երաշխիքով, անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել հիմնական գործընկերային կազմակերպությունների՝ մասնագետների նկատմամբ ունեցած պահանջարկի համալիր ուսումնասիրություն: Իսկ դա իր հերթին ենթադրում է դասախոսի ուսուցողական գործունեությունից անցում ուսանողի՝ առավել ևս մագիստրոսի, ճանաչողական գործունեությանը: Այս համատեքստում նա կարևորեց նաև ուսանողների ուսումնառության արդյունքների գնահատման համակարգի օբյեկտիվության և հրապարակայնության բարձրացումը, ինչը կնպաստի ուսանողների կողմից հիմնարար գիտելիքներ ստանալուն:

Համալսարանի գիտական ներուժը պետք է առավելագույնս օգտագործվի՝ մեծացնելով նրանց ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում, նշեց ռեկտորի թեկնածուն: Մինույն ժամանակ, յուրաքանչյուր դասախոսի աշխատանքի վարձատրությունը պետք է անմիջականորեն կախվածության մեջ դրվի նրա տված գիտական արդյունքից: Տվյալ շեշտումով՝ Մ. Մինասյանը կարևոր համարեց գիտական աստիճանների համար տրվող հավելավճարների վերանայումը, գիտական աշխատանքներում մագիստրանտների ու ասպիրանտների ներգրավվածության խրախուսումը, ուսանողների փորձուսուցման գիտահետազոտական ուղղվածության ապահովումը, համալսարան-տնտեսություն համագործակցության ապահովումը և այլն:

Ուշագրավ էր ռեկտորի թեկնածուի մոտե-

ցումը կադրային խնդիրներին: «Կարծում եմ, պետք է մշակվեն համալսարանի պրոֆեսորական կազմի պարբերաբար բարձրացման և ընդլայնման որակական հատկանիշների բարձրացմանն ուղղված հեռանկարային ծրագրեր՝ ասպիրանտական կրթությունն ուղղորդելով դեպի համապատասխան պահանջարկ ունեցող մասնագիտություններ», - ասաց նա: Այդ ամենի իրականացման համար ֆինանսական միջոցների հոսքերի կառավարումն ու դրանց արդյունավետության բարձրացումը կարևոր բաղադրիչ է համարելով, Մ. Մինասյանը միաժամանակ հավելեց. «Կարծում եմ, պետք է քայլեր ձեռնարկվեն համալսարանի՝ պետք ունեցող ստացվող միջոցների ծավալների աճն ապահովելու համար, ինչը մասամբ տեսնում եմ պետական ծրագրերին համալսարանի մասնակցության աճով, մասամբ էլ՝ յուրաքանչյուր ուսանողի համար պետության կողմից տրվող նվազագույն շեմի բարձրացմամբ: Շատ կարևոր են նաև համալսարանի կողմից մատուցվող ծառայությունների ծավալի ավելացումը, դրամաշնորհային ծրագրերում ընդգրկվելը, համալսարանի թափուր, անգործունակ հաստիքների կրճատումը»: Թեկնածուն չչրջանցեց նաև բուհում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ու բարոյա-հոգեբանական պատշաճ մթնոլորտի ապահովման թեման՝ ընդգծելով այդ ուղղությամբ տարվող աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու անհրաժեշտությունը:

Մանուշ Մինասյանը նաև պատասխանեց խորհրդի անդամների հարցերին, դրանց տալով սպառիչ պատասխաններ: Ռեկտորի մյուս թեկնածուն՝ Հովիկ Մուսայելյանը, ինքնաբացարկ տվեց: ԼՂՀ կրթության և գիտության նախարար Ալավա Արյանը, հավանության արժանացնելով Մանուշ Մինասյանի ներկայացած ծրագրի դրույթները, ասաց որ ծրագրում ներառված են այն բոլոր ոլորտները, որոնք անհրաժեշտ են համալսարանի հետագա գործունեության ճիշտ կազմակերպման համար: Կարևորելով ռեկտորի դերը համալսարանի զարգացման գործում, նախարարը համոզմունք հայտնեց, որ ընտրվելու դեպքում թեկնածուն պետք է հետամուտ լինի ներկայացված դրույթների իրագործմանը: ԱրՊՀ խորհրդի նախագահ, վարչապետ Արա Չարությունյանն անդրադարձ կատարեց ռեկտորի թեկնածուի աշխատանքային գործունեությանը՝ տեղեկացնելով, որ նա մինչ այդ աշխատել է «Հայագրոբանկի» Մարտունու մասնաճյուղում, ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայությունում և Ազգային վիճակագրական ծառայությունում: Ըստ վարչապետի՝ Մանուշ Մինասյանը նշված բոլոր տեղերում էլ աչքի է ընկել գործիմացությամբ ու աշխատանքի նկատմամբ բարձր պատաս-



խանավությամբ: «Համալսարանի ռեկտորը մեր երկրի համար շատ կարևոր պաշտոն է, և մենք գիտակցում ենք այն մարտահրավերները, որոնք սպասում են մեզ բարձրագույն կրթության ոլորտում: Ծանաչելով նրան՝ համոզված ենք, որ նրա կողմից իրականացված բարեփոխումները մեկ քայլ առաջ կտանեն համալսարանը, և այն իր լուրջ մասնակցությունը կունենա երկրի տնտեսության զարգացման գործում: Ես համոզված եմ, որ մեր ընտրությունը ճիշտ է լինելու: Նրա աշխատասիրությունն ու հմտությունը թույլ կտան արագ համակերպվել պաշտոնին», - ասաց Արա Չարությունյանը:

Տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, որի արդյունքում ծայրերի մեծամասնությամբ՝ 23 կողմ, 3 դեմ և 1 անվավեր, Արցախի պետական համալսարանի ռեկտոր ընտրվեց Մանուշ Մինասյանը:

Հաջորդ օրը վարչապետ Արա Չարությունյանը կրթության և գիտության նախարար Ալավա Արյանի մասնակցությամբ ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողությանը ներկայացրեց նորընտիր ռեկտորին:

Վարչապետը նախ շնորհակալություն հայտնեց նախկին ռեկտոր Ստեփան Դադայանին՝ բուհի ղեկավարման տարիներին հաջողություններ արձանագրելու համար: Այնուհետև շնորհավորելով Մանուշ Մինասյանին, նա հակիրճ ներկայացրեց Մ. Մինասյանի աշխատանքային ուղին՝ շեշտելով վստահված գործի նկատմամբ նրա բարձր պատասխանատվությունն ու կառավարման ունակությունները: Արա Չարությունյանը հավաստիացրեց, որ համալսարանի կոլեկտիվի հետ իր շփումներն այսուհետև լինելու են հաճախակի և չեն սահմանափակվելու սոսկ տարեկան հաշվետվություններով:

Մանուշ Մինասյանը շնորհակալություն հայտնելով վստահության համար, նշեց, որ ինքը լավ է գիտակցում իր առջև դրված խնդիրների ողջ ծանրությունն ու պատրաստ է բոլորանվեր կցվելու դրանց կենսագործմանը: Իսկ դա, ռեկտորի խոսքով, հնարավոր է համատեղ աշխատանքով: «Մեր բոլորի նպատակը պետք է լինի մեկը՝ Արցախի պետական համալսարանի հետագա զարգացման ապահովումը, ինչն իր հերթին կնպաստի մեր աշխատողների բարեկեցության բարձրացմանը», - համոզմունք հայտնեց Մ. Մինասյանը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Գրանցված է

Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության արդարադատության

ճախարարության կողմից 2013 թվականի

օգոստոսի 12-ին

Պետական գրանցման համարը 10513114

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

արդարադատության նախարար Ա. Դանիելյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«Z» օգոստոսի 2013թ.

N 175-Լ

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի N165-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝

հրամայում եմ.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հուլիսի 9-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2013-2014 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» (այսուհետ՝ ուսումնական պլաններ) N 165-Ն հրամանի հավելվածում կատարել հետևյալ լրացումը.

1. Ուսումնական պլանների 20-րդ կետի 2-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «5-րդ դասարանում 3-րդ ու 4-րդ և 6-րդ դասարանում 5-րդ ու 6-րդ դասարանների ծրագրերը լրիվությամբ ուսուցանելու համար լրացուցիչ հատկացվում են 1-ական ժամ՝ դպրոցական բաղադրիչից կամ խմբակային պարապմունքների համար նախատեսված ժամերից»:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

Ա. ԱՍՐՅԱՆ

ՕՐԱԳԻՐ

ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵՐ

Մեր մանկապարտեզներում պարբերաբար կազմակերպվում են նպատակային միջոցառումներ, բաց պարապմունքներ, որոնք այս կամ այն կերպ նպաստում են երեխաների աշխարհայացքի ձևավորմանն ու ընդլայնում նրանց հետաքրքրությունների շրջանակը: Այստեղ սովորում են ճիշտ ու գեղեցիկ խոսել:

Յետաքրքիր ու հուզիչ էր մայրաքաղաքի հ. 1, 2, 3 մանկապարտեզների ավարտական տոնահանդեսը: Յուրաքանչյուրը մի յուրօրինակ դաս էր՝ համեմատել երգ ու պարով: Ավագ խմբի սաները հրաժեշտ տվին մանկապարտեզին՝ խոստանալով, որ բարձր կպահեն մանկապարտեզի պատիվը, դպրոցում կլինեն աշխատասեր ու ջանասեր, կսովորեն գերազանց: Երեխաների շուրթերից հպարտություն էր ծորում, աչքերից՝ ուրախության արցունքներ: Նրանք ուրախ ու զվարթ էին, հետո հուզվեցին, որովհետև բաժանվում են հեքիաթային օջախից... Երեք մանկապարտեզներն էլ ճաշակով էին կահավորված, օրվա խորհուրդը հիշեցնող պաստառներով՝ «Մենք դպրոց ենք գնում», «Դեպի պայծառ ապագա», «Մնաս բարով»: Ներկաները համոզվեցին, որ երեխաներն իրոք, շատ բան են սովորել մանկապարտեզում, ընկերացել են թվերի ու երկրաչափական պատկերների հետ, կարող են հաշվել նաև օտար լեզվով՝ ռուսերեն, անգլերեն: Փոքրիկների իմացությունը ոգևորիչ էր: Երեխաների սրտաբուխ արտասանությունը ոգեկոչում էր հայրենասիրություն ու անձնավիրություն, բարություն ու պարզություն, սեփական արժեքները գնահատելու կարողություն:

Յ. 1 մանկապարտեզում (տնօրեն՝ Ժաննա Զաքարյան) երեխաները վարպետորեն և արհեստավարժ շարժումներով ներկայացրին Յու. Թումանյանի հեքիաթների հերոսներին, հատկապես «Քաջ Նազար», «Սուտասանը», «Անբան Յուզիկ», «Բարեկեղծանը», «Տերն ու ծառան», «Սուտիկի որսկանը», «Կիկոսի մահը» ստեղծագործություններից: Այս կերպ երե-

խաները շփվում են կենդանի խոսքին, մտովի հաղորդակցվում դերակատարների հետ, ընդօրինակում նրանց գեղեցիկ արտահայտու-

լով սրբությամբ պաշտպանել ազատ ու անկախ Արցախը:

Ուրիշ հմայք ուներ հ. 2 մանկապարտեզի (տնօրեն՝ Լարիսա Ներսիսյան) հրաժեշտի հանդեսը:



թյուններն ու խոսքի հնչյունները, բառերն ու արտասանության եղանակը: Ավագ խմբի սաներն ասումնջով ու երգով սրտից բխած երախտագիտության խոսք ասացին՝ երվե-

րա հնչեց որպես հավատարմության երդում հայ մնալու: Փոքրիկների հայկական երգ ու պարը ներկաներին համակեցին այն մտայնությամբ, որ մանկապարտեզում բարձր հիմ-

քերի վրա է դրված հայեցի դաստիարակությունը:

Յու. 2-ի ու ոգեշնչող էր հ. 3 մանկապարտեզի (տնօրեն՝ Ի. Գրիգորյան) ավագ խմբի երեխաների ասումնջով ու պարը, որը փայլուն առհավատչա էր նրանց ձեռք բերած գիտելիքների: Յայկական ոգով ու շնչով նրանք ներկայացրին իրենց սովորածը՝ որպես հոգուն թաքնված, մասնիկների գեներով փոխանցված հայ լինելու հպարտություն: Մանկապարտեզի ողջ անձնակազմը ջանացել էր օրվա խորհրդին պատշաճ մակարդակով հանդիսություն ներկայացնել: Քանի որ տարեվերջյան ավարտական միջոցառումը կազմակերպել էին մրցույթի ձևով՝ չորս փուլով, այն տեղափոխեցին մանկապարտեզի բակ: Երկու թիմերը՝ «Ձանգակ» և «Երիցուկ», հավասար միավորներ հավաքեցին, չնայած աշխույժ մրցում էին և մտածում միայն հաղթանակի մասին: Իսկ հանդեսը վարում էր հ. 1 դպրոցի 4-րդ «գ» դասարանի աշակերտուհի Կարինե Իշխանյանը, ով այդ մանկապարտեզի շրջանավարտն է և մերձ կապերի մեջ է մանկապարտեզի ողջ անձնակազմի ու երեխաների հետ: Բոլոր հանդեսներն էլ իմաստալից էին ու տրամադրող և դրական լիցքեր հաղորդեցին ոչ միայն հանդիսատեսին, այլև երեխաներին:

ԷՎԻՐԱ ՍԱՅԱԿՅԱՆ-ԶԱԶԱՐՅԱՆ

Սպեկի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի մասնագետ

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԱՅՑ

Բազմակողմանի զարգացած մարդ դաստիարակելու գործում կարևոր դեր է խաղում հանրակրթական դպրոցը: Այստեղ են մեր երեխաներն ստանում հասարակական և գիտատեխնիկական առաջադիմության պահանջներին համապատասխան ընդհանուր կրթություն: Իսկ կրթությունն առանց դաստիարակության իր բարի պտուղները չի կարող տալ: Դաստիարակության գործը հասարակության մեջ առավել շատ ծանրացած է մեր՝ մանկավարժներիս ուսերին, և մեր նպատակը մեկն է՝ կրթել ու դաստիարակել բազմակողմանի ու զարգացած մարդ, որը պատրաստ լինի դառնալու մեր Արցախ աշխարհի վարկա տերը, լինի հայրենասեր, ազգասեր և մարդասեր, հոգատար՝ իր շրջապատի մարդկանց հանդեպ, աշխատասեր և ստեղծագործ, արարող, որոնող, ուսումնասիրող:

Յետևաբար, մեր՝ մանկավարժներիս գերխնդիրն է լինել քաղաքականապես հասուն, ընթանալ ժամանակին համահունչ, դառնալ սաների վատահեղին և առաջնորդը: Մենք միշտ էլ փնտրության մեջ ենք, հետևում ենք թերթերին, ամսագրերին, հեռուստատեսությանը: Յամակարգից օգտվում ենք մեր գիտելիքների պակասը լրացնելու համար:

Ստեփանակերտի դպրոցների կրթության և դաստիարակության գծով փոխտնօրենների համար արտակարգ նվեր էր քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի կողմից կազմակերպված էքսկուրսիան դեպի Թբիլիսի: Յենտ գործ չէ հեռավոր էքսկուրսիա կազմակերպելը. այն շատ հետևողական և քրտնաջան աշխատանք է պահանջում: Գիտենք նաև էքսկուրսիայի ընձեռած լայն հնարավորությունները, աշխարհաճանաչության և տեսարժան վայրերի գեղեցկությունը ըմբռնելու հաճույքի զգացումը: Ճշգրիտ

հաշվարկ էր արված էքսկուրսիայի ամեն մի բովանդակ արդյունավետ անցկացնելու համար:

Ճիշտ նշված ժամին հավաքվեցին էքսկուրսիայի բոլոր անդամները՝ մայրաքաղաքի դպրոցների փոխտնօրեններ, կազմակերպիչներ, կրթության և գիտության նախարարության և քաղաքապետարանի կր-



թության բաժնի աշխատողներ՝ թվով 21 հոգի:

Յրաժեշտ տալով խաղաղ քնով քնած Ստեփանակերտին՝ մեր մեքենան շարժվեց դեպի Շուշի: Ամեն անգամ մի անթաքույց հպարտությամբ ենք համակվում՝ տեսնելով մեր հիմնավորը Շուշին՝ ազատագրված թշնամուց:

Ուրապտույտ ճանապարհի աջ ու ձախ կողմերին կուսական անտառներ են: Յիսնալով հայրենի բնության գեղեցկությամբ՝ հասանք Գորիս: Բոլորիս երազանքն էր ժամ առաջ հասնել Սևանա լիճ: Գիմնավորելով մայր Յայաստանի արևածագը՝ մենք հասանք Գեղամա տիրու-

հուն, որի յուրաքանչյուր այլը կարծես մի հետաքրքիր խաղ էր սկսել արևի ճառագայթների հետ: Մեր ներկայությունն ասես մի նոր աշխուժություն էր մտցրել նրա կյանքում: Լողափին շատ ընտանիքներ էին հանգստանում՝ լողում էին, զննակով խաղում, նավակներով զբոսնում Սևանի կապույտ ջրերում: Մենք

բաժնի աշխատակից Անահիտ Մեսրոպյանն անընդհատ հեռախոսակապի մեջ էր Թիֆլիսի «Յայարտուն» մշակութային կենտրոնի ներկայացուցիչների հետ, և նրանք էլ մեզ մեծ սիրով ընդունեցին Թիֆլիսի հայկական Սբ. Էջմիածին եկեղեցում: Նրանց հետ ծանոթանալուց հետո, որպես էքսկուրսավար մեզ ներկայացրին Միքայել Ավագյանին: Նա մեզ տարավ հոջիվանք կոչվող պանթեոնը, որտեղ ամփոփված են մեր շատ մեծերը և գրական գործիչները, Սբ. Գևորգ եկեղեցի՝ տեսնելու Սայաթ-Նովայի գերեզմանը: Մեզ վրա անջնջելի տպավորություն թողեց երեկոյան Թիֆլիսը, որը զարդարված հարսի պես փայլում էր գույնզգույն լույսերի առատությամբ, երբ նրան նայեցինք Թիֆլիսի անձնաբարձր տեղից՝ Չվարի եկեղեցուց:

Էքսկուրսիայի տպավորիչ կետերից մեկը եղավ մեր խմբի անդամ «Լուսարար» թերթի խմբագիր Ա. Խաչատրյանի թոռան ծնունդը: Խմբով բարձրացել էինք քաղաքի անձնաբարձր կետը՝ ներային լույսերից պսպղացող աշտարակը, խմբվել էինք հարթակում, և թնդաց շամպայնը, լսվեցին ուրախության կանչեր և բարենաղթանքի խոսքեր: Յայի ծնունդը պատահական չէր, այն եկավ հաստատելու, որ հայը եղել է, կա, կլինի հար-հավետ: Տոնախմբությունը շարունակվեց մի գեղեցիկ համերաշխ հայկական օջախում՝ Ալբերտ և Վիլյետա Գևորգյանների տանը: Այդ տան մանուկներն էլ էին անչափ հյուրասեր, մեր ներկայությունից չէին նեղվում, այլ հիացնում էին մեզ իրենց արտասանությամբ, երգ ու պարով:

Պետք է հիշատակել նաև մեկ այլ հայկական ընտանիքի՝ տիկնիկագործ Գարի և Ժաննա Դավթյանների: Ցավոք, կյանքին շուտ է հրաժեշտ տվել Գարին, բայց նրա կինը,

վառ պահելով ամուսնու հիշատակը, շարունակում է նրա գործը՝ ստանձնելով տիկնիկային թատրոնի դեկավարումը: Նա իր տունը վեր է ածել մի փոքրիկ թանգարանի, որը շնչում է հայերեն: Նա անգնահատելի գործ է կատարում հայապահպանության, ազգային կոլորիտի, կենցաղի ցուցադրության համար: Նրա երազանքն է լինել Արցախում և մեր մանուկներին ծանոթացնել իր արվեստին:

Շատ հետաքրքիր ժամանակ անցկացրինք Յավաբար հայկական թաղամասում, զմայլվեցինք Քուռ գետի խայտանքով: Էքսկուրսիայի ընթացքում իմացանք նաև, որ այն տանը, որտեղ ապրել է Յու. Թումանյանը, այժմ ապրում է նրա ծոռուհին: Այս էքսկուրսիան մի յուրօրինակ սեմինար էր, ինչու չէ նաև հայրենասիրության ընդօրինակման դաս, որն իր անջնջելի տպավորությունը թողեց խմբի յուրաքանչյուր անդամի վրա:

Յանոզված են, մեր այս նոր գիտելիքները մեզ կօգնեն մեր հետագա աշխատանքում՝ միջոցառումներ կազմակերպելիս, մեր սաների կրթությունն ու դաստիարակությունն էլ ավելի բարձր հիմքերի վրա դնելու գործում: Այս ճանփորդությունը մեզ նոր լիցք հաղորդեց, և մենք կաշխատենք քառապատկված եռանդով:

Մեր երախտագիտության խոսքն ենք ուղղում էքսկուրսիայի նախածեռնող Ա. Մեսրոպյանին, կազմակերպիչ քաղաքապետարանին, կրթության բաժնի պետ Կ. Մարգարյանին, մեր ծրագրին աջակցող Վիրահայոց թեմին՝ հանձնա եպիսկոպոս սրբազան Միրզախանյանի, «Յայարտուն» մշակութային կենտրոնի անձնակազմին:

Ժամնա ԳՐԻԳՈՐՅԱՆ Սպեկի Ե. Չարենցի անվ. հ. 7 հիմն. դպրոցի փոխտնօրեն

ԳՈՐԾԵԼՆԵԱՑ

ՇԱԽՄԱՏՈ ՎԱՍՏԱՏՎՈՒՄ Ե ԴՊՐՈՑՈՒՄ

Նախանցած ուսումնական տարվանից ՀՀ հանրակրթական կրտսեր դպրոցում մտցվեց շախմատ առարկան: Արցախում այն սկզբում միայն Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի 2-րդ դասարանի ուսումնական ծրագրերում ներառվեց փորձնական կարգով, իսկ անցած ուստարվանից՝ հանրապետության բոլոր դպրոցներում: Դասավանդող ուսուցիչների ընտրությունը կատարվել է Արցախի շախմատասեր ուսուցիչներից և շախմատիստներից՝ Հայաստանի շախմատի ակադեմիայի մասնագետների կողմից՝ համապատասխան քննության արդյունքում, որոնց համար նաև վերապատրաստումներ կազմակերպվեցին, և տրվեց մեկ տարվա դասավանդման իրավունք:



Օգոստոսի 12-18-ը Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոցում անցկացվեց շախմատ առարկայի ուսուցիչների վերապատրաստման դասընթացների երկրորդ փուլը: Լ.Բ.Լ. կրթության և գիտության նախարարության հրավերով արցախցի ուսուցիչների համար դասընթացներ վարեցին Հայաստանի շախմատի ակադեմիայի մի խումբ մասնագետներ՝ մարզիչներ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս Սամվել Միսաքյանը (խմբի ղեկավար), Անդրանիկ Մասունյանը, Արշակ Ռամազյանը, հոգեբաններ՝ Երևանի պետական համալսարանի ասպիրանտ Սոնա Պողոսյանը, Լ.Բ.Լ. ԿԳՆ բարձրագույն և միջին մասնագիտական կրթության բաժնի պետ Լուսինե Վարախանյանը:



Ավելի քան 200 ուսուցիչներ, ըստ շրջանների, տարբեր լսարաններում տեսական ու գործնական պարապմունքներ անցան մասնագետների հետ:

Ինչպես տեղեկացրեց Ս. Միսաքյանը, դասընթացների նպատակն էր ուսուցիչներին ծանոթացնել հիմնականում 3-րդ դասարանի ծրագրերին. այս ուսումնական ծրագրերը դասարանի հետ միասին նաև 3-րդ դասարանում կուսումնասիրվի շախմատ առարկան: Դասընթացների հենց սկզբում ուսուցիչներին տրամադրվեցին 3-րդ դասարանի դասագիրք, մեթոդական գրականություն՝ ուսուցչի ձեռնարկ, ուղեցույց, գրավորների տեսքեր, և մինչև սեպտեմբերի 1-ը նրանք կհասցեն լիարժեք ծանոթանալ դասավանդվող նյութին:

Ինչպես նշեցինք, շախմատի դաս

ախտների հետ մեկտեղ դասավանդում էին նաև հոգեբաններ: Ս. Միսաքյանի խոսքով, քանի որ շախմատ

գոտություն: Առաջին տարին ուսումնասիրել ենք 2-րդ և 3-րդ դասարանցիների ստեղծագործական մտածողությունը. 2-րդ դասարանում շախմատ անցնում էին, իսկ 3-րդում՝ դեռ ոչ: Պարզվեց, որ 2-րդ դասարանցիների ստեղծագործական մտածողության որակները բավական բարձր են 3-րդիցիների համեմատ: Երկրորդ փուլում ուսումնասիրեցինք տրամաբանա-

րոցում, որտեղ շախմատ չէր ուսումնասիրվում: Արդյունքները ցույց տվին, որ շախմատ ուսումնասիրող երեխաների դատողությունը բոլորովին բավական է: Իսկ ովքեր չեն ուսումնասիրում, նրանց մտածողությունը դանդաղ է: Շախմատը է ոչ միայն տրամաբանության, այլև ճկուն մտածողության (երբ մի հարցի կապակցությամբ վերցնում ենք մի քանի տարբերակներ) զարգացմանը: Շախմատը կարևոր է կրեատիվ մտածողություն ձևավորելու գործում. աշխարհը գնում է դեպի գիտելիքահեռ տնտեսություն, իսկ ինտելեկտ հնարավոր է ունենալ միայն կրեատիվ մտածողություն ունենալու դեպքում, որը ձևավորվում է նաև շախմատային մտածողության շնորհիվ: Շախմատի ուսուցիչների դասընթացները կարևորվում են նրանով, որ կան ունկնդիրներ, ովքեր չունեն մանկավարժական կրթություն, նրանք պետք է ճիշտ պատկերացնեն կրտսեր դպրոցականի հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները: Լավ շախմատ խաղալ՝ դեռևս չի նշանակում ապահովել արդյունավետ դաս: Կան որոշակի հոգեբանական մտածողության մեթոդներ, որոնցով շախմատը կրտսեր դպրոցականի համար դառնում է հրապուրիչ, և կան ուսուցչի անձին ներկայացվող պահանջներ»,- հարցրեցինք Ս. Միսաքյանը:

տը կրտսեր դպրոցում փորձաշրջանի փուլով են անցնում և չունեն պատրաստի ուսուցիչներ, որոնք համապատասխան բուհական կրթություն ունենան, օգնությունն ուսուցիչներին ինչպես շախմատիստների, այնպես էլ հոգեբանների կողմից կարևոր է: Ս. Միսաքյանը տեղեկացրեց, որ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում անցած տարի ստեղծվել է շախմատի և սպորտի ամբիոն՝ Հայաստանի շախմատի ակադեմիայի տնօրեն Սմբատ Լյուտսյանի ղեկավարությամբ:

Դասավանդող վերոնշյալ հոգեբանների խոսքով՝ իրենց նպատակն է ուսուցիչներին ծանոթացնել կրտսեր տարիքի դպրոցականների առանձնահատկություններին՝ ինչ զարգացում կա նրանց մոտ, ինչ խնդիրներ ունեն կամ կարող են ունենալ, որպեսզի ուսումնական գործընթացը կազմակերպեն նրանց ընդունակությունները հաշվի առնելով և ամենակարևորը՝ ուսուցիչների հետ քննարկեն դասավանդման արդյունավետության բարձրացման միջոցները:

Շախմատը կարևոր է կրեատիվ մտածողություն ձևավորելու գործում. աշխարհը գնում է դեպի գիտելիքահեռ տնտեսություն, իսկ ինտելեկտ հնարավոր է ունենալ միայն կրեատիվ մտածողություն ունենալու դեպքում, որը ձևավորվում է նաև շախմատային մտածողության շնորհիվ: Շախմատի ուսուցիչների դասընթացները կարևորվում են նրանով, որ կան ունկնդիրներ, ովքեր չունեն մանկավարժական կրթություն, նրանք պետք է ճիշտ պատկերացնեն կրտսեր դպրոցականի հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները: Լավ շախմատ խաղալ՝ դեռևս չի նշանակում ապահովել արդյունավետ դաս: Կան որոշակի հոգեբանական մտածողության մեթոդներ, որոնցով շախմատը կրտսեր դպրոցականի համար դառնում է հրապուրիչ, և կան ուսուցչի անձին ներկայացվող պահանջներ»,- հարցրեցինք Ս. Միսաքյանը:

Նման հետազոտություններ կատարվել են նաև Արցախի դպրոցներում: «Ուսումնասիրություն ենք կատարել՝ պարզելու շախմատի դասավանդման կարևորությունը. «Գաղտնիներում երեք փուլով անցկացրել ենք հետա-

կան մտածողությունը 2-4-րդ դասարաններում: Այս պարագայում 4-րդիցիները դեռ չէին ուսումնասիրում շախմատը: Մենք պարզեցինք, որ 3-րդիցիների տրամաբանական մտածողության մակարդակը 4-րդիցիների համեմատ բավական բարձր է: Մինչդեռ տարիքային դիմամիկ օրինակափոխությամբ հակառակը պիտի լիներ: Եվ սա կարյուր ենք շախմատի դասավանդման հետ: Բայց մեկ ուրիշ հանգամանք էլ կա՝ ուսուցչի գործունեությունը: Այն ուսուցիչը, որը դասի ժամանակ ցուցաբերում է ստեղծագործական մտեցում և կիրառում մտածողությունը զարգացնող միջոցներ, կարողանում է զարգացնել երեխայի մտածողությունը: Միայն այդ պարագայում կլինի ակնկալվող արդյունքը»:

Հայաստանի շախմատի ակադեմիայի մարզիչների կարծիքն արցախցի ուսուցիչների վերաբերյալ բարձր է: Մեզ հետ ունեցած զրույցում բոլորն էլ լավ արտահայտվեցին նրանց սովորելու, գիտելիք ստանալու ձգտման մասին: Վերջիններս նույնպես իրենց գոհունակությունը հայտնեցին դասընթացներից: Չնայած նրանք հիմնականում սիրող շախմատիստներ են՝ տարբեր մրցույթների մասնակցած, բայց մանկավարժամեթոդական գիտելիքների կարիք ունեն, ինչն էլ ստացան: Ուսուցիչներ Նորայր Գավթյանը

(Գրախոսիկ), Լյովա Բաղդասարյանը (Ազոխ), Էդիկ Գաբրելյանը (Ասկերան), որոնք երկար տարիներ զբաղվում են շախմատով և դպրոցում վարում շախմատի խմբակ,



վկայեցին, որ իրենք շատ գիտելիքներ ստացան դասընթացներում և ուրախ են, որ շախմատը վերջապես մտավ դպրոց:

«Կարծում եմ, շախմատ սովորելուց հետո բարձր դասարաններում ավելի հեշտ կլինի բնագիտական առարկաներ սովորելը: Շախմատ մտցնելը ես համարում եմ հայ դպրոցի կարևոր քայլերից մեկը»,- ասաց Է. Գաբրիելյանը:

Մեր այն հարցին, թե Արցախը երբևիցե կդառնա շախմատային երկիր, մարզիչներից Ա. Ռամազյանը պատասխանեց. «Շախմատը միանգամից չի կարող առաջ գնալ: Դա գործընթաց է: Դրա համար շախմատային միջավայր պետք է լինի: Շախմատում հիմնականում երեք գործոն կա՝ ախտասիրություն, կամք և Աստուծո կողմից տրված շնորհ: Այստեղ կամք, աշխատասիրություն տեսանք, Աստուծո էլ եթե ողորմած լինի շնորհի հարցում (ինչու է չենք կասկածում, դարաբաղցին օժտված է բնատուր խելքով), հաղթանակներն անպայման կլինեն»:

Շախմատի մասնագետները տեղեկացրին նաև, որ տարվա ընթացքում իրենք կհետևեն ուսումնական գործընթացին:

Դասընթացների վերջում ուսուցիչները քննություն հանձնեցին՝ շախմատ առարկան դասավանդելու իրավունք ձեռք բերելու համար: Իսկ նրանք, ովքեր անցյալ տարվա վերապատրաստումների արդյունքում ստացել էին մեկ տարվա իրավունք, վերահաստատեցին այն:

Ս. ԽԱՉԱՏՅԱՆ

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԱՅՑ

Ժամանակին Թիֆլիսը տարածաշրջանի հայ մշակույթի նշանավոր կենտրոնն էր, որտեղ ուսում են ստացել և իրենց ստեղծագործական կյանքը սկսել մեր նշանավոր գրողներից շատերը: Յուրաքանչյուր հայի սուրբ պարտքն է ճանաչել մեր նախնիների թողած հոգևոր, ազգային արժեքները: Այս նպատակին ծառայեց Ստեփանակերտի մի խումբ մանկավարժների եռօրյա էքսկուրսիան դեպի Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի:

Օգոստոսի 6-ի ուղ գիշերին մեր մեքենան բռնեց Թիֆլիս տանող ճանապարհը: Ահա երևում է հայոց բնաշխարհի երկնագույն մարգարիտը՝ Սևան լիճը: Այստեղ մենք հանգստացանք, զովացանք, հիացանք նրա ուրախ ու զվարթ ալիքներով, բարձրացանք եկեղեցի, արոթեցինք առ Աստված ու շարունակեցինք մեր ճանապարհը: Անես ծառ ու ծաղիկ միացել մեր ուրախությանը և ուղեկցելով մեզ, պատգամում էին. «Աշխարհի հայեր, եղեք միաբան»:

Ամիսներովսամբ սպասում էինք, թե երբ տեղ կհասնենք: Մեզ



ռությանը ու անկեղծ սիրով մեզ ընդունեցին:

Հավատացնում ենք, որ այդ սերը փոխադարձ է: Մեր ուրախությունը կրկնապատկվեց, երբ տեսանք, թե տան հրաշք փոքրիկները (տանտիրոջ թռուները) ինչպես են խոսում գրական հայերենով: Ըստ իս, Թիֆլիսի հայ համայնքն ակտիվ գործունեություն է ծավալում հայ մնալու, հայկական արժեքների պահպանման ուղղությամբ: Այդ էր վկայում նաև շնորհակալագիրք, որը Վրաստանում ՀՀ դեսպանատնում շնորհել է այս ընտանիքի կրտսեր դստերը՝ Լալա Գևորգյանին՝ ազգապահպանման և մատաղ սերունդի հայեցի դաստիարակության ուղղությամբ ակտիվ գործունեության համար:

Խոսելու, գրելու, պատմելու շատ բան կա, բայց ես ուզում եմ նշել առանձնապես մեկը. այցելեցինք տիկնիկների հայտնի վարպետ

ղամասում և այլուր:

Մեզ ջերմությամբ հյուրընկալեց Ալբերտ և Վիլելմա Գրիգորյանների ընտանիքը: Տոնական սեղանը սպասում էր հյուրերին: Մեկ էլ լսվեց. «Բա չենք երգո՞ւմ»: Ու հնչեց Հ. Բեգլարյանի «Ղարաբաղցին» երգը: Տանտերերի աչքերին ուրախության արցունքներ փայլեցին: Պետք էր տեսնել, թե նրանք ինչ խանդավա-

Գարի Դավթյանի տուն, որտեղ այսօր նրա գործը շարունակում է նրա կինը:

Մեծ է նման էքսկուրսիաների դեռ ազգապահպանության, հայոց արժեքներին հավատարիմ լինելու և վերջապես հայ մնալու համար: Նման էքսկուրսիաները պիտի շարունակական լինեն և փոխադարձ:

Հիրավի, հեռավորությունը չի կարող արգելք հանդիսանալ աշխարհով մեկ սփռված հայերի համար: Մենք պետք է միաբան լինենք, քանզի մեր հաղթանակը մեր միասնության մեջ է:

Այդ երեք օրվա ընթացքում ստացած բավականությունը երկար կմնա մեր հիշողության մեջ, և հուսով եմ, հաջորդ հանդիպումը կկայանա Արցախում: Սիրով սպասում ենք այդ օրվան:

Խմբի անունից շնորհակալություն՝ էքսկուրսիայի նախաձեռնող և կազմակերպիչ Անահիտ Մեսրոպյանին:

Մարինե ԽԱՉԱՏՅԱՆ Ստեփ. հ. 5 հիմն. դպրոցի ՄԱՎՍՏ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃՆԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ ՀՈՉԱԿԱՆ ՄԱՍԻՆ

ԼՂԻՄ - 90

2013-ի փետրվարին մեծ շուքով նշեցին Արցախյան շարժման 25-ամյակը: Չնայած Շարժման մասնակիցներն էինք, սակայն քիչ բան գիտենք նրա շարժառիթների, ակունքների, ակտիվիստների ու շատ «մանրուքների» մասին: ՉԼՄ-ները, որոնք թվում «Լուսարարը», իր «Ինչպես է դա եղել» հոդվածաշարով փակագծերը բացեցին, և այսօրվա սերունդը կարծես ինչ-որ չափով լավ տեղեկացավ Շարժման պայթման մասին:

Արդեն ավանդույթ է դարձել նոր ուսումնականի՝ Գիտելիքի օրվա հետ անցկացնել նաև Արիության դաս ու ԼՂՅ Անկախության, ավելի ճիշտ, ԼՂՅ հռչակման դաս, որի բաղկացուցիչ մասը նոր՝ 2013-2014 ուստարում կլինեն հենց մեր Շարժման 25-ամյակին նվիրված նյութերը: Կարծում եմ, ավելի արդյունավետ կլինի, եթե դասն անցկացնողներն անդրադառնան նաև ԼՂԻՄ կազմավորման պատմությանը, քանի որ հուլիսի 7-ին լրացավ ԼՂԻՄ հռչակման 90-ամյակը, իսկ մեզանից շատերը չգիտեն, թե այն ինչ դժվարություններով է ձեռք բերվել և ինչ դժվարին ճանապարհ է անցել մինչև ԼՂՅ հռչակումը: Սովորաբար բարձր դասարաններում Արիության դասը կազմակերպում են պատմության ուսուցիչները, իսկ նրանք թվում քիչ չեն իմ և իմ սերնդի պատմության ուսուցիչների նախկին աշակերտները, ինչու չէ, նաև ուսանողներ, որոնք ծարավի են ԼՂԻՄ պատմությանը, բայց դասագրքերում և այլ աղբյուրներում նրա մասին ոչինչ չեն գտնում, և տված տեղեկություններն էլ իրատեսական չեն ու կրում են միակողմանի բնույթ:

Իմ սերունդը (և ոչ միայն իմ) ծանոթ չէր Արցախի 1918-1920-ական թվականների պատմությանը. այն փակված էր երկաթե դռների հետևում և ամսապत्रերի էր մեզ համար: ԼՂԻՄ կազմավորման մասին առանձնապես հիշվում էր հոբելանական տարիներին, որոնցից շատ լավ հիշում եմ ԼՂԻՄ հռչակման 50-ամյակը և 60-ամյակը, քանի որ թե՛ ի պաշտոնում և թե՛ որպես պրոպագանդիստ ու քաղաքական, վերադասի տված թեգիսները հիմք ընդունելով՝ հանդես էինք գալիս հասարակության և աշակերտության շրջանում, կազմակերպում բազմաբնույթ միջոցառումներ, պրոպագանդում մարզի ձեռքբերումները: Ինչ քաջանեմ, նույնիսկ հպարտանում էի, որ քաղաքի հ. 21 ՊՏՈՒ-ում աշխատելու ժամանակ արբանյակալըն եմ ստեղծել և ուղարկել մյուս 14 միութենական հանրապետությունների հ. 21 ՊՏՈՒ-ները և 1973թ. հուլիսին հարուստ նյութերով ծանրաբեռնված՝ վայրէջք կատարել Ստեփանակերտում: Իսկ հ. 9 միջնակարգում աշխատելու ժամանակ էլ ԼՂԻՄ-ի մասին բազմաթիվ տեղեկություններ ու բացիկներ և «Սովետական Ղարաբաղ» ու «Սովետակի Կարաբախ» թերթերով ծանրոցներ են ուղարկել Միության 7 ինքնավար մարզերի կենտրոնի հ. 9 միջնակարգ դպրոցներ ու նրանցից ստացել իրենց մարզի մասին նյութեր ու հարուստացրել և պատմության կարիները, և՛ ինտերնացիոնալ բարեկամության ակունքը: Չավելջտականն այն է, որ մեր հասարակությանն ու աշակերտությանը համոզելուց բացի այն ժամանակվա վերևից տվածը՝ կարմիր գույնով գրված, ուղարկել են մարզից դուրս: Այն է.

«Չենվելով ազգային հարցի լուծման լեհինյան սկզբունքների վրա, Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը և հանրապետության կառավարությունը ՌԿ(Բ)Կ Կենտկոմի կողմնակցությամբ բյուրոյի ղեկավարությամբ, Մ.Կ. Օրջոնիկիձեի, Ա.Մ. Կիրովի, Ն.Ն. Նարիմանովի, Ա.Ս. Նազարբեյանի ակտիվ մասնակցությամբ նախապատրաստեցին և Սովետների ադրբեջանական գործադիր կոմիտեի ղեկընտրված 1923թ. հուլիսի 7-ին իրագործեցին Լեռնային Ղարաբաղի ինքնավարության կազմումը» («Եղբայրական ընտանիքում - 50», էջ 25, 1973):

Մենք չգիտեինք, որ Օրջոնիկիձեի ու Կիրովի այն օրերին վարել են տատանողա-

կան քաղաքականություն: Նրանք եղել են Ղարաբաղում՝ Խանաբաղում, Քարազխում, Քարազխից հեռադիտակով նայել շրջակա ավերված գյուղերին, գնացել Շուշի, հեռագրել Լեռնին: Քաջատեղյակ են եղել թուրքերի գազանություններին, և, ինչպես Մեծն արցախցի Բագրատ Ուլուբաբյանն է գրում՝ «Որտեղի՞ց իմանանք, թե ինչպես պատահեց, որ նախընթացին Արցախի վրա Չայաստանի տիրապետությունը և, առհասարակ, հայ բնակչության ինքնորոշման իրավունքը մինչև վերջ պաշտպանած Օրջոնիկիձեի և Կիրովը հանկարծ շուռ եկան ու համաձայնեցին, որ ընդունվի իրենց կամքին հակառակ բացահայտորեն սուտ ու անարդար մի որոշում, այն է՝ «Ա. Ելենովը մահմեդականների ու հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և վերին ու Ներքին Ղարաբաղի տնտեսական կապից, նրա մշտական կապից Ադրբեջանի հետ, Լեռնային Ղարաբաղը թողնել Ադր.ԽՍՀ սահմաններում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն՝ վարչական կենտրոն Շուշի քաղաքով, որը մտնում է ինքնավար մարզի մեջ...»: Մեկը հիմա հարցնի՝ 25 տարի է, ինչ ոչ մի կապ չունենք Ադրբեջանի հետ, պակաս ե՞նք ասում: Չգիտեինք, որ Ն. Նարիմանովը երկերեսանի, բացահայտ հակահայ վարքի տեր, սուտ ասելու, խոստումը դրժելու, մաշակափոխությունը սովորական դարձրած, ղարաբաղյան հարցում մի քանի ամսվա ընթացքում դիրքը փոխելու վարպետ էր, ցուցամուկ ու խարդախ, որի կրկնօրինակն այսօր Իլիամ Ալիևն է: Նարիմանովը ինքնավարություն իրականացնողներին դաշնակցական էր կոչում: Չգիտեինք Զ. Նազարբեյանի մասին, որ Կոմբյուրոյի անդամ լինելով, դավաճանական քայլով է իրեն դրսևորել և Նարիմանովի կամակատարն է եղել ու դեմ քվեարկել Ղարաբաղը Չայաստանի կազմի մեջ մտցնելուն:

Այո, մենք չգիտեինք, որ 1921թ. հուլիսին ԼՂ-ի հարցը քննարկվել է Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) Կոմկաբյան բյուրոյի նիստում, որտեղ հուլիսի 4-ին և 5-ին ընդունվել էին երկու իրարամերժ որոշումներ: Բայց գլխարկներս հանած՝ գովաբանում էինք. «Ադրբեջանական Չանրապետության կազմում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծումը հանդիսացավ լեհինյան ազգային քաղաքականության ևս մի փայլուն հաղթանակ: Դա նպաստեց հայերի ու ադրբեջանցիների եղբայրական բարեկամությունն էլ ավելի ամրապնդելուն և զարգացնելուն»: Ծիծաղելի է, չէ՞:

Այժմ, թե ինչպես է հրավիրվել Կոմկաբյան բյուրոյի նիստը և ինչ արդյունք է ունեցել: Պատմության ուսուցիչներին հայտնի է, թե երբ և ինչու է Ղարաբաղը վիճելի տարածք ճանաչվել Չայաստանի Չանրապետության և, այսպես կոչված, Ադրբեջանական Դեմոկրատական Չանրապետության միջև: Չայտնի է նաև 1920թ. օգոստոսի 10-ին Ռուսաստանի և Չայաստանի Չանրապետության միջև կնքված համաձայնագիրը, որով Ռուսաստանը ճանաչեց ԼՂ-ն որպես վիճելի տարածք Խորհրդային Ադրբեջանի և ոչ Խորհրդային Չայաստանի Չանրապետության միջև: Չայաստանում խորհրդային կարգերի հաստատումից (1920թ. նոյեմբերի 29) անմիջապես հետո Ադրբեջանի հեղկոմը մինչ այդ վիճելի դիտվող երկր տարածքները (Նախիջևան, Չանգեզուր և Լեռնային Ղարաբաղ) ճանաչեց Խորհրդային Չայաստանի անկապտելի մաս: Ադր.ԽՍՀ իշխանությունները դա փաստեցին նախ ԳԽՍՀ կառավարությանը նոյեմբերի 30-ին հեռագրած հռչակագրով և հետո՝ դեկտեմբերի 1-ին Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում նույն հռչակագրի հրապարակումով: 1920թ. դեկտեմբերի 2-ին Ռուսաստանի հարավի արտակարգ կոմիսար Սերգո Օրջոնիկիձեի Բաքվից ՌՍԴԽՅ ժողկոմխորհին ղեկուցում է. «Ընկ. ընկ. Լեռնինի և Ստալինին... Ադրբեջանը

երեկ արդեն, հօգուտ Խորհրդային Չայաստանի, հայտարարել է Նախիջևանը, Չանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը հանձնելու մասին...» («Իզվեստիա», թիվ 273, 1920թ. դեկտեմբերի 4): Իսկ նույն օրի դեկտեմբերի 4-ին ՌՍԴԽՅ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար Ստալինը հանդես եկավ հատուկ դիմումով. «...Դեկտեմբերի 1-ին Խորհրդային Ադրբեջանը կամավոր կերպով հրաժարվում է վիճելի զավառներից և հռչակում Չանգեզուրի, Նախիջևանի, Լեռնային Ղարաբաղի հանձնումը Խորհրդային Չայաստանին... Չայաստանի և նրան շրջապատող մահմեդականների միջև դարավոր թշնամանքը լուծվել է մի հարվածով...» («Իզվեստիա», թիվ 273, 1920թ. դեկտեմբերի 4):

Չայտնի է նաև, որ Ադր.ԽՍՀ 1920թ. նոյեմբերի 30-ի հռչակագրի տեքստը մասնակիորեն փոխվել է Բաքվի «Կոմունիստ» թերթում հրապարակված տեքստում, որում Ադր.ԽՍՀ-ն ճանաչում էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը: Մեզ՝ պատմաբաններին, հայտնի է նաև 1921թ. մարտի 16-ի Մոսկովյան պայմանագիրը թուրքիայի հետ, որով Չայաստանից խլեցին նրա անբաժան մաս Նախիջևանը: Դրանից հետո «Չայաստանի կառավարությունը գործի անցավ գոնե Արցախին տեր կանգնելու համար, գրում է Բագրատ Ուլուբաբյանը,- հավանաբար, այս առթիվ լուրջ խոսակցություն էր եղել կուսակցության Կոմկաբյան բյուրոյում կամ նրա կառավարության շրջանակում, որով հետև 1921թ. հունիսի 3-ին Կոմբյուրոն Ս. Օրջոնիկիձեի, Ֆ. Մախարաձեի, Ն. Նարիմանովի, Ալ. Մյասնիկյանի և այլոց մասնակցությամբ ընդունել էր որոշում, որի 5-րդ կետով Չայաստանին հանձնարարվում էր հռչակագրով հաստատել Լեռնային Ղարաբաղի պատկանելությունը Չայակական ԽՍՀ-ին»:

Չենվելով ԼՂ բնակչության լիազոր ներկայացուցիչների համազումարների մինչ այդ ընդունված որոշումների և Ադր.ԽՍՀ հեղկոմի հռչակագրի, Ադր.ԽՍՀ կառավարության հետ ձեռք բերած համաձայնության վրա՝ ԳԽՍՀ կառավարությունը 1921թ. հունիսի 12-ին ԼՂ-ն հռչակեց իր անկապտելի մաս և ստեղծեց Ղարաբաղում Չայաստանի Չանրապետության արտակարգ կոմիսարի պաշտոն ու այդ պաշտոնին նշանակեց Ասքանազ Մռավյանին: Քանի որ այդ օրերին թիֆլիսում համաանդրկովկասյան կարևոր խորհրդակցություն էր գնում, այնտեղ էր գտնվում նաև Մռավյանը: Օրջոնիկիձեի հանձնարարությամբ Մռավյանն ու Ադրբեջանի ռազմածովային ժողկոմ Ալիեյդար Կարաևը պետք է մեկնեին Ղարաբաղ՝ Չայաստանին տրված մարզի կյանքը կազմակերպելու և նոր հունի մեջ դնելու համար: Երբ հասան Եվլախ, Կարաևը Մռավյանին հայտնում է, որ Նարիմանովի հանձնարարությամբ պետք է Մռավյանի հետ գնան Բաքու, քանի որ Լեռնային Ղարաբաղի հարցը նոր պարզաբանումների կարիք ունի: Եվ դրանք պիտի կատարվեն Բաքվում: Մռավյանը հրաժարվում է Բաքու մեկնելուց և հունիսի 25-ին սուրիանդակի միջոցով տագնապտու երկտող ուղարկում Օրջոնիկիձեին. «Լեռնային Ղարաբաղի հարցի շտապ ու աներկրիմի լուծումն ունի վիթխարի կարևորության քաղաքական նշանակություն և վճռական գործոն կհանդիսանա Չանգեզուրի հարցը լուծելիս: Չետագա ձգձգումը միայն հաղթաբուր է մեր թշնամիների ձեռքին»: Մռավյանի երկտողը Օրջոնիկիձեին է հասել հունիսի 26-ին, այժման, երբ Թիֆլիսում իր եզրափակիչ աշխատանքներն էր տանում Անդրկովկասյան հանրապետությունների սահմանային հարցերը քննող հանձնաժողովը՝ Կիրովի ղեկավարությամբ: Չանձնաժողովի միակ հայ անդամ Բելկադյանն առաջարկել էր «...անել որոշ տարածքային գիշումներ, ընդ որում, խիտ հայ բնակչություն ունեցող շրջաններում»: Խոսքն Ափալքալաքի շրջանին, Լոռու գավառին և Լեռնային Ղարա-

բաղին էր վերաբերում: Վրաց և ադրբեջանական կողմերը (Օրջոնիկիձեի և Կիրովի հեռախոսագրով) կտրականապես մերժեցին: Չունիսի 27-ին Նարիմանովը հրավիրեց կուսակցության Կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի նիստ, ընդունեց որոշում՝ արտահայտելով իրենց անհամաձայնությունը Լեռնային Ղարաբաղը Չայաստանին միացնելու առնչությամբ: Այսպիսով, Բաքուն հրաժարվեց ինչպես իրենց ընդունած որոշումներից, այնպես էլ Կոմկաբյան բյուրոյի հունիսի 3-ին կայացրած որոշումը ճանաչելուց: Նարիմանովը իր դիմակը պատռեց. չէ՞ որ ինքն էլ էր հունիսի 3-ի նիստի մասնակիցը ու համաձայնություն տվողը և ահա, Կոմկաբյան բյուրոյի նախագահությունը հունիսի 27-ի նիստում լսելով Ադրբեջանի արտագործող կոմիտեի ղեկուցումն իր ու Նարիմանովի հեռախոսագրույցի մասին (Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ), որոշեց. «Չարվիրել ՌԿԿ Կոմբյուրոյի արտահերթ պլենումն և ընկ. ընկ. Նարիմանովին ու Մյասնիկյանին հղել հեռագիր, որ շուտափույթ ժամանեմ մասնակցելու պլենումին...»: Բյուրոյի նիստը տեղի ունեցավ հուլիսի 2-7-ը: Լեռնային Ղարաբաղի պատկանելության հարցը քննության դրվեց Կոմբյուրոյի հուլիսի 4-ի նիստում: Ներկա էին Ստալինը և բյուրոյի ութ անդամները (Օրջոնիկիձե, Կիրով, Մախարաձե, Նարիմանով, Մյասնիկյան, Նազարբեյան, Օրախելաշվիլի և Ֆիգատներ):

Քննության ընթացքում երևան եկան երկու տեսակետներ, և քվեարկության դրվեցին հետևյալ հարցերը (այդ մասին շատ պարզ գրված է Բ. Ուլուբաբյանի «Արցախյան գոյապայքարը» գրքում):

Ա. Ղարաբաղը թողնել Ադրբեջանի սահմաններում: Կողմ քվեարկեցին Նարիմանովը, Մախարաձե, Նազարբեյանը, դեմ՝ Օրջոնիկիձե, Մյասնիկյանը, Կիրովը, Ֆիգատները:

Բ. Չանրաքվե անցկացնել ամբողջ Ղարաբաղում՝ ինչպես հայ, այնպես էլ մահմեդական ամբողջ բնակչության մասնակցությամբ: Կողմ քվեարկեցին երկու հոգի՝ Նարիմանովն ու Մախարաձե:

Գ. Ղարաբաղի լեռնային մասը մտցնել Չայաստանի կազմի մեջ: Կողմ քվեարկեցին Օրջոնիկիձե, Կիրովը, Մյասնիկյանը, Ֆիգատները:

Դ. Չանրաքվե անցկացնել միայն Լեռնային Ղարաբաղում, այսինքն՝ հայերի շրջանում: Կողմ քվեարկեցին Օրջոնիկիձե, Մյասնիկյանը, Ֆիգատները, Կիրովը և Նազարբեյանը:

Որոշեցին. Լեռնային Ղարաբաղը մտցնել Չայակական ԽՍՀ կազմի մեջ, հանրաքվե անցկացնել միայն Լեռնային Ղարաբաղում»:

Ինչպես տեսնում եք, այս որոշումն ընդունվել է առանց ընթացակարգի (պրոցեդուրա) խախտումների, խնդրի քննարկմամբ ու քվեարկությամբ: Որոշումն ընդունելուց հետո Ն. Նարիմանովը իր զգոհությունն է հայտնում և հայտարարում. «Նկատի ունենալով այն կարևորությունը, որ Ղարաբաղի հարցն ունի Ադրբեջանի համար, անհրաժեշտ են համարում այն վերջնական լուծման համար փոխադրել ՌԿ(Բ)Կ Կենտկոմ»:

Կարծես սառը ջուր լցվեց բյուրոյի անդամների գլխին, և ընդունվեց նոր որոշում:

«Նկատի առնելով, որ Ղարաբաղյան հարցը հարուցել է լուրջ տարածաշրջանային, ՌԿ(Բ)Կ ԿԿ Կոմբյուրոն անհրաժեշտ է համարում այն փոխադրել ՌԿ(Բ)Կ Կենտկոմ՝ վերջնական որոշման համար: Չգիտես ինչու, մեկնումնեկ կանգնեց հարցնելու՝ Նարիմանով դու Նարիմանով, մի՞թե դու չէիր 1920թ. նոյեմբերի 30-ի՝ Կայասնին ուղարկված հեռագրի հեղինակը, մի՞թե դու չէիր Կոմբյուրոյի 1921թ. հունիսի 3-ի նիստի մասնակիցը, որի համաձայն՝ ամբողջ աշխարհին հայտնի է դարձել, որ Լեռնային Ղարաբաղը միացվել է մայր հայրենիքին: Չարցի լուծումը Մոսկվա չհասավ: Չաջորդ օրը՝ հուլիսի 5-ին, Բյուրոն նույն կազ-

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃՅՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ ԿՈՎԱԿԱՆ ԱՄԱԽԻՆ

մով ու Ստալինի մասնակցությամբ վերստին անդրադարձավ Ղարաբաղի հարցին (Օրջոնիկիձեն ու Նազարբեյանը հարց էին բարձրացրել վերանայել նախորդ միստի որոշումը Ղարաբաղի մասին: (Ես գյուղում եմ գտնվում, հնարավորություն չունեմ հետաքրքրվել այս ծախս ու մարդով, չնայած քաղաքում հանրագիտարանի բոլոր հատորներն ունեմ, իսկ համացանցից էլ հեռու եմ): Եվ ահա առանց հարցի քննարկման ու առանց քվեարկության դնելու ընդունվում է մեկ այլ որոշում, ըստ որի, ԼՂ-ն թողնվում է Ադր.ԽՍՀ սահմաններում՝ խորհրդային տիպի պետականությամբ, այն էլ՝ այն իրավունքներով ինքնավար մարզի կարգավիճակով, Շուշի մայրաքաղաքով: Որոշման տեքստը ես վերևում ներկայացրել եմ: Քանի որ Անկախության դասը չի սահմանափակվում 45 րոպեով, շարունակեմ:

Նախ, մեր ժողովուրդը միահամուռ մերժեց Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին միացնելու մասին որոշումը: Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն էլ իր 1921թ. հուլիսի 16-ի որոշմամբ այն որակեց որպես արմատից պիսակ որոշում և իր բողոքն արտահայտեց: Ուժեղ խոսակցություն եղավ Հայաստանի կոմկուսի առաջին համագումարում, 1922թ. հունվարին, իսկ արցախահայությունը նոր պայքար սկսեց:

Ադրբեջանը հասել էր իր նպատակին՝ Անդրերկրյանի որոշումով նվաճել էր Լեռնային Ղարաբաղի տարածքը՝ այնտեղի բնակչության 94,6%-ը կազմող հայությանը ինքնավարություն տալու պայմանով:

Ինչպես արժանափառաբան Բագրատ Ուլուբաբյանն է գրում, «Ամեն ինչից երևում էր, որ այդ ինքնավարությունը չի տրվելու»: Իսկ 90-ական թվականներին մենք մեր դպրոցականներին (և ոչ միայն) հանձնում էինք, որ «Կոմբյուրոյի որոշումից հետո Ադրբեջանի ղեկավարությունը Լեռնային Ղարաբաղի հայ գյուղացիության համաձայնությունը ձեռք բերելու համար Ադրբեջանի կազմում մարզային ինքնավարության մասին կաշված դուրս եկավ՝ օգտագործելով ամեն ինչ, և նույնիսկ հայտարարեցին, որ հանրաքվե է անցկացվել ու հավանության արժանացել»: («Հայոց պատմություն», Նյուքեթի ժողովածու, էջ 217):

Երկրորդն այն էր, որ նրանք ամենուրեք հանդիպում էին դիմադրության, բայց ոչ թե ինքնավարությանն էին դեմ, այլ՝ Ադրբեջանի կազմում մնալուն: Արցախահայությունը ցանկանում էր միանալ իր մայր Հայաստանին:

Բաբուն չէր ուզում Կոմբյուրոյի որոշումը լրիվությամբ կատարել: Ամեն ինչի դիմում էր, որ ինքնավարության հարցը վերանա, և ձգտում էր թեկուզ մի արցախցի կամ մի քանի հոգի արտահայտվեն ինքնավարության դեմ, որ մատան փաթեթան դարձնի ու չտա այդ ինքնավարությունը: Օգտագործում էր հայ գործիչներին: Արցախածնունդ Լևոն Միրզոյանը (Աշառ գյուղից է) ադրբեջանական ղեկավարության մեջ մեծ կշիռ ուներ (կուսակցության Կենտկոմի 2-րդ քարտուղար էր, ժողկոմ-խորհի նախագահի առաջին տեղակալ, կուսակցության Բաքվի կոմիտեի քատուղար, հանրապետության արհմիությունների նախագահ է եղել ու այլ պաշտոններ վարել): Նրան միշտ առաջ էին մղում, որ Ղարաբաղում էլ ունենա և արցախահայերի համաձայնությունը ստանա, թե իբր ինքնավարություն չեն ցանկանում: Նա Կարակի հետ եղել է հանրապետության շրջանում, Հաղորտի, ճարտար գյուղերում և ամենուրեք հավաքելով տեղի ակտիվը, հարց է դրել համաձայնության մասին ու միշտ մերժում ստացել: Լևոն Միրզոյանը շատ լավ տեսնում էր ղարաբաղցիների վիճակը, թուրքերի բռնությունները և Ղարաբաղից վերադառնալով՝ զեկույց է ներկայացնում կուսակցության Ադրբեջանի Կենտկոմ: Պատճենը՝ Անդրերկրում: Եվ պահանջում է շուտափույթ իրականացնել ինքնավարության հարցը: Նա առաջարկում է ամբողջ Լեռնային Ղարաբաղն առանձնացնել որպես ինքնուրույն

վարչական միավոր՝ ենթակա Կենտրոնին՝ Ադրժողովուրդին և Կենտգործկոմին. նա լավ գիտեր Ադրբեջանի ղեկավարության խարդալանքները, դրա համար էլ զեկույցի պատճենն ուղարկել է Անդրերկրյան: Եվ ահա, նույն թվականի սեպտեմբերի 26-ին ԱդրԿ(Բ)Կ ԿԿ Քաղբյուրոն ու Կազմբյուրոն միացյալ նիստում որոշում են. «Խնդրել Կոմբյուրոյին՝ վերանայելու իր որոշումը Լեռնային Ղարաբաղին առանձնացնելու մասին, մինչ այդ այսուհետ ինքնավարություն չհայտարարել»: Դրանով չբավարարվելով՝ Ադրբեջանի ղեկավարությունը, այսպես կոչված, Ղարաբաղի պատասխանատու աշխատողների (փաստորեն՝ նարինանովականների ադրբեջանցի դրածոների) կոնֆերանս է հրավիրում և որոշում.

«Ղարաբաղի աշխատողների կոնֆերանսը աննպատակահարմար է համարում Լեռնային Ղարաբաղի բաժանումն իբրև առանձին ինքնավար մարզի և գտնում է, որ բոլոր միջոցառումները կոնֆերանսի բանաձևում հենց հանդիսանում են դարաբաղյան հարցի լուծում»: Դրանով էլ չեն բավարարվել: 1922թ. նոյեմբերին Շուշիում հրավիրվում է գավառների գյուղական խորհուրդների կուսբյուրոների ներկայացուցիչների ժողով, իբր հանրաքվեի պատրվակով: Ժողովին ներկա էին Ադրկոմկուսի ԿԿ 2-րդ քարտուղար Լևոն Միրզոյանը և մեզ ծանոթ Կարակը:

Ժողովականները մերժում են Ադրբեջանի կազմում թողնելը, որոշում և պահանջում, որ իրենք ցանկանան են Հայաստանին միանալ:

Լ. Միրզոյանը վերադառնում է Բաքու, իսկ Կարակն իր խմբով երեք օր մնում է Շուշիում: Նա մեկ-մեկ ժողովի մասնակիցներին կանչում է և հարցնում. «Ուզում ես Ղարաբաղը մնա Ադրբեջանի կազմում, թե՞ միանա Հայաստանին»: Ադրբեջանի կազմում թողնելու համաձայնողներին մի դռնով են բաց թողնում, որ գնան տուն, իսկ Հայաստանին միանալու կողմնակիցներին՝ մի այլ դռնով, և կողքի սեմյակում սպասում են:

Հետո Բաքու տեսելու պատրվակով տանում և 32 հոգու Կարմիր գյուղի մոտերքում գնդակահարում են (Փ. Օհանջանյան, «Արցախ-Ղարաբաղ», էջ 136):

Արցախը շարունակում է պայքարը: Նրա շահերի պաշտպանությամբ հանդես է գալիս նաև Հայաստանի ղեկավարությունը, որն ստեղծված պայմաններում մարզն իր հանրապետության կազմի մեջ մտնելը համարելով անհիմն, ձգտում է ամեն ինչ անել, գոնե ազգային ապահովություն և խաղաղություն հաստատել արցախահայության համար: Այսպես օրինակ, 1922թ. փետրվարին Անդրկոմկուսի կոմունիստական կազմակերպությունների 1-ին համագումարում Ս. Օրջոնիկիձեն իր հաշվետվության մեջ ասել է. «Երկր է, մենք Ադրբեջանում երկար զբաղվեցինք Ղարաբաղյան հարցով, սակայն վերջիվերջ որոշեցինք ղարաբաղյան բնակչությանը՝ Լեռնային Ղարաբաղի հայերին տալ ինքնավարություն Ադրբեջանի խորհրդային Հանրապետության սահմաններում: Գործնականում այդ ինքնավարության կենսագործումը հանձնարարվել էր Ադր.ԿԿ Կենտկոմին: Ես խոսեցի ընկ. Կիրովի հետ. «Ինչո՞ւ դա դեռևս չի արվել: Եվ նա մշտ, թե հայերն ու մուսուլմանները համաձայնել են, որ այդ ինքնավարության անհրաժեշտությունը չկա: Ես չգիտեմ դա այդպե՞ս է, թե մի ուրիշ կերպ, ամեն պարագայի այդ հարցը այնպես է լուծվում, որ բնակչությանը տրվի վճռելու իր խնդիրը... Փաստն այն է, որ այնտեղ ոչ մի բախում, ոչ մի տարածայնություն չկա, և դա ցույց է տալիս, թե ազգային հարցի այդ լուծումը, որ մենք կատարել ենք սկզբից իսկ, ճիշտ է»:

Համագումարում ելույթ է ունենում Ադրբեջանի կազմակերպության ներկայացուցիչ Կուլիկը, որը նշում է. «Կոմբյուրոն մտածում էր, որ յուրաքանչյուր գավառ, ուր ապրում է որևէ ազգություն, իր լեզվով պետք է ունենա ինքնավարություն: Ադրբեջանի Կենտկոմն էլ,

որ Ղարաբաղի հարցի պարզաբանման համար հանձնաժողով է ընտրել, ճիշտ վարվեց, երբ ասում էր՝ Ղարաբաղին պետք չէ ոչ մի ինքնավարություն...»: Հիմա համեմատեք Կիրովի պատասխանը Օրջոնիկիձեի ասածի հետ, Կուլիկի ելույթը համագումարում: Եզրակացությունը մեկն է՝ Ադրբեջանի ղեկավարությունը ամեն ինչ անում է, որ Ղարաբաղին ինքնավարություն չտա:

Ելույթ է ունենում նաև Հայաստանի կուսակցության Կենտկոմի քարտուղար Սարգիս Լուկաշին-Սրապիոնյանը՝ հօդս ցնդեցնելով այն պատրանքը, թե իբր Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հարցը վերջնականապես լուծված (Կուլիկի «հաղթական» հայտարարության համաձայն) պիտի համարել:

Քննադատական խոսքով ելույթ է ունենում նաև Լևոն Միրզոյանը՝ ասելով, որ ղարաբաղյան հարցը չպետք է շփոթել այլ ազգային, այն էլ՝ Ռուսաստանի ժայռամասային ազգային փոքրամասնությունների հարցի հետ, ղարաբաղյան ուրիշ է: Հայաստանի ղեկավարությունը շատ լավ տեսնում է, որ Ադրբեջանը չի ցանկանում Ղարաբաղին ինքնավարություն տալ, և ահա, 1922թ. հունիսի 5-ին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պլենումն ընդունեց հետևյալ որոշումը. «Քարտուղարությանը հանձնարարել դիմելու Անդրկոմկուսի երկրկոմ, պատճառաբանված խնդիրով՝ իրականացնելու Կոմկուսյան բյուրոյի որոշումը Լեռնային Ղարաբաղին Ադրբեջանի հովանավորության տակ ինքնավարություն տալու մասին: Եվ միայն նույն թվականի հոկտեմբերի 27-ին Անդրերկրյանի նախագահությունը հանձնարարություն է ստանում Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմին հանձնարարել, որ այն իրականացնի Կոմբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշումը Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու մասին և Կարակոզովին նշանակում է Ղարաբաղի գործկոմի նախագահ, իսկ Սուրեն Շադունցին էլ երաշխավորում պատասխանատու աշխատող, որը որպես արցախցի, Անդրերկրյան էր ներկայացնում մարզում և համարվում էր ինքնավարության հարցերը լուծող Լեռնային Ղարաբաղի կոմիտեի ղեկավար: Նա շատ լավ էր հասկանում Ղարաբաղի հարցը և գերազանց գիտակցում նրա վիճակը, ու երբ 1923թ. հունիսի 13-ին կոմիտեի պատրաստած հատուկ զեկույցը ներկայացնում է Անդրերկրյանին, նրան կից ուղարկում է նաև իր սեփական տեսակետը՝ այն հասցեագրելով Ս. Օրջոնիկիձեին: Պատճենները ԱդրԿԿ Կենտկոմին և ՀԿԿ Կենտկոմին՝ նշելով, որ Ղարաբաղը ոչ Ադրբեջանին և ոչ էլ Հայաստանին, այլ Ձանգեզուրի հետ առանձին վարչական միավորի կարգավիճակով ենթարկվի Անդրկոմկուսյան երկրկոմին: Ահա այդ զեկույցում ու նամակն ստանալուց հետո է, որ Անդրերկրյանի պլենումը կտրուկ վճիռ հանեց Լեռնային Ղարաբաղին առանձին ինքնավար մարզ դարձնելու մասին. և Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմին հրահանգեց մեկ ամսվա ընթացքում իրականացնել այդ որոշումը, իսկ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմը ոչ թե մեկ ամսվա, այլ այդ հրահանգն ստանալուց հետո երեք օր հետո հանձնարարում է Ադրբ. Կենտգործկոմին ԼՂԻՄ-ը կազմելու մասին: Եվ Ադրբ. Կենտգործկոմը հուլիսի 7-ին ընդունում է այդ հռչակագիրը, բայց լրիվ շուռ տված: Հռչակագրի բոլոր կետերը մանրամասնորեն շարադրված են Փ. Օհանջանյանի «Արցախ-Ղարաբաղ» գրքում (էջ 14):

Նախ, Արցախի տարածքը 11,5 հազ. քառ. կմ էր, մինչդեռ ինքնավար մարզը՝ 4,4 հազ. քառ. կմ տարածքի վրա ստեղծվեց: Նրանից անջատվեցին ամբողջ Հյուսիսային Արցախը՝ նախկին Գյուլիստանի մեխիթրության տարածքը, Թալիշի մոտերքից մինչև Ալիարակ լճի (Գյուլ-գյուլ) հարավային ափերը, ուր անառիկ Գետաշեն ավանն է՝ մերձակա հայկական գյուղերով: Մարզից անջատվեցին և հարևան ադրբեջանական գավառներին տրվեցին Դիզակի, Վարանդայի ու Ջրաբերդի արևելյան

մասերի մի շարք գյուղեր՝ իրենց բերրի հողատարածքներով: Կոմբյուրոյի որոշմամբ մարզի կենտրոն ճանաչվեց Շուշին, իսկ Ադրբեջանի հռչակագրով մարզի կենտրոն համարվեց Խանքենդին (Վարաբակն), որը Ղարաբաղի կուսակցության մարզկոմի 1923թ. սեպտեմբերի 18-ի որոշմամբ Ստեփան Շահումյանի անունով կոչվեց Ստեփանակերտ:

Հռչակագրից հետո էլ Ադրբեջանը ամեն ինչ անում է, որ մարզը Հայաստանի սահմաններից կտրի, և ԱդրԿ(Բ)Կ ԿԿ նախագահության 1923թ. հուլիսի 16-ի որոշմամբ հանձնարարվում է կազմել «Քուրդիստանի գավառ», ու դրանով խախտվեց մայր Հայաստանի հետ մեր մարզի սահմանակցությունը: Այդքանով չբավարարվեցին: Նույն թվականի հոկտեմբերի 8-ին ԱդրԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահությունը ընդունեց —մի որոշում, որն ինչպես արժանափառաբան Բագրատ Ուլուբաբյանն է գրում, «պիտի դառնար հայկական մարզը ներսից պայթեցնելու սև գործի սկիզբը՝ իբր թե ժամանակավորապես Շուշին դարձնում են Քուրդիստանի գավառային կենտրոն՝ այն պահելով «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կազմում»:

Դե Ղարաբաղի հայ, եկ հաշտվիր. ցատուն-նալից բողոքի ալիքը մարզի հայության կողմից այդ որոշումը հօդս ցնդեցրեց: Բայց ինչպես գիտե՞ք, թուրքը մնում է թուրք, հետագա տարիներին այնպես գործեց, որ Շուշին ադրբեջանական կենտրոն դարձավ և նույնիսկ ամենակատարի կրակակետ՝ ընդդեմ մեր մայրաքաղաքի ու շրջակայքի: Փառք մեր ազատամարտիկներին: Աբաս Միրզան 48 օր շրջապատած պահեց, չկարողացավ վերցնել, իսկ մեր ազատամարտիկները մի քանի ժամվա ընթացքում մաքրեցին մինչև ատանները զինված ադրբեջանական կանոնավոր կոչվող բանակի զորամասերից: Շուշին դառավ շուռ քաղեց և շնչում է հայերեն:

Վերջապես ԼՂԻՄ-ի հռչակման մասին ճիշտը գրված է ներկա գրքերում. «խորհրդային Հայաստանի ղեկավարության և արցախահայության հաստատական և հետևողական ջանքերի շնորհիվ երկու տարվա համառ դիմադրությունից հետո միայն խորհրդային Ադրբեջանի իշխանություններն ստիպված էին 1923թ. հուլիսի 7-ի որոշումով Լեռնային Ղարաբաղին տրամադրել ինքնավար մարզի կարգավիճակ» (Հայոց պատմություն, 11-րդ դաս., 2010, էջ 228):

Համաձայն մեկ ակադեմիկոս Ալեքսանդր Մանասյանի կարծիքին. «Անկախ այն բանից, որ ԼՂ-ն Ադր.ԽՍՀ սահմաններն է մտցվել ԼՂ ժողովրդի կամքին հակառակ, ԼՂ ինքնավար մարզը 1923թ. ստեղծվել է որպես խորհրդային տիպի ազգային պետական կազմավորում, որպես Ադր.ԽՍՀ հայ ժողովրդի իրավունքների պետական պաշտպանության երաշխիք... ԽՍՀՄ սահմանադրության գերակայության պայմաններում մարզը քիչ բանով է տարբերվել միութենական հանրապետություններից թե՛ պետականության մեջ, նրանից օտարված գործառույթների (բանակ, տարադրամ, քաղաքացիություն, արտաքին քաղաքականություն), թե՛ նրանց վերապահված պետականության ատրիբուտների (ԽՍՀՄ բարձրագույն օրենսդիր մարմիններում ներկայացված լինելով՝ Ազգությունների պալատում, միութենական հանրապետություն-25, իսկ ինքնավար մարզ - 5 պատգամավոր ուներ - Ս. Շ.)՝ իր վարչական սահմանները միայն իր համաձայնությամբ փոխելու տեսակետից»:

ԼՂԻՄ-ի շնորհիվ էր, որ մենք՝ արցախահայերս, խորհրդային տարիներին դիմակայեցինք Ադրբեջանի սադրանքներին ու ազգային խտրականության քաղաքականությանը: ԼՂԻՄ-ի առկայությամբ էր, որ մենք ԼՂՀ հռչակվեցինք և ստեղծեցինք հայկական երկրորդ պետություն:

ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՆՍՊՈՒԹ ԵՌԱՆԴՈՎ ԼԵՅՈՒՆ ԿՅԱՆՔ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Դիմանկարի փոխարեն



Սվետլանա Ասրյան: Անունից էլ, եռթյունից էլ լույս է ճառագում: Թվում է՝ մակդիրներն ավելորդ են...

Շատ սիրելի Սվետլանա Ասրյան: Հավատացած եմք, որ քո սաներից շատերը պայծառ մտքով...

թերևս 24 ժամից չի բաղկացած, այլ՝ կրկնակի: Հասարակական կյանքի ցիկլը... Հուսահատվել չգիտի: Անհնար է թվարկել...

Որի լույսը բերում է Հրաշքների մի աշխարհ: Պատահական խոսքեր չեն: Նրա ողջ կյանքն ու գործունեությունը ինքնաշարժ է...


Նոր գիրք

ՀԱՅՐԵՆԻ ՏԱՆ՝ ԲԱՆԱԶՈՒՐԻ ՑԱԿԻՑ ՈՒ ՍԻՐՈՒՑ ԾՆՎԱԾ ՏՈՂԵՐ

Այդ շատ տարիներ առաջ էր: Պարսկահայաստանից տարագիր հայերի՝ մեր պապերի քարավանները եկան...

միրներին, մայիսյան ծաղկունքի մեջ փթած իրենց հանդ ու դաշտին, իրենց աղի քրտանի թարմ հացի բուրմունքը...

սին տարիներով մշակված ու գրված դասագիրքը չկորչի՝ սերունդներ դաստիարակող հերոսական Դիզակի այդ հատվածի պատմության դասագիրքը...



Շնորհավորանք

ԿՅԱՆՔ՝ ՄՇՏԱԿԱՆ ՍԼԱՑՔԻ



Ժպտերես, կենսախիճն ու բարեհամբույր, երիտասարդական եռանդով լեցուն, տարիների վաստակ ամբարած ու մանկավարժի գեղեցիկ կենսագրություն կերտած, գործընկերների ու սաների կողմից գնահատված ու սիրված տիկինը...

ՀԱՅՐԵՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ

«ԷԿՈ-ՊԱՏԱՐԱ» ՃԱՄԲԱՐ

Արցախը մարդկանց գիտակցության մեջ ոչ միայն ազատատենչ ու մարտնչող է, այլև էկոլոգիապես մաքուր միջավայր է:

Վաղ ժամանակներից Արցախում բազմաթիվ առողջարանային վայրեր, ամառանոցներ են կառուցել բնության գեղատեսիլ վայրերում: Իսկ մաքուր, սառնորակ ու համաքային ջրերը և բնության առատ բարիքները մարդկանց առողջություն են պարգևում: Դրանց մաքուր ու բազմազան բնության մեջ է արցախյան երկարակեցության գաղտնիքը:

Հայրենի բնությանը, բնապատմական հուշարձաններին ավելի մոտ լինելու, այն ճանաչելու, էկոլոգիական մտածելակերպ տարածելու համար օգոստոսի 2-5-ը կազմակերպվեց վրանային ճամբար Պատարա համայնքում:

Ճամբարը կազմակերպվել է Joint civic education-ի էկոլաբ ազգային ծրագրի շրջանակներում, համագործակցելով «Արցախի երիտասարդության զարգացման կենտրոն» ՀԿ-ի հետ, պատարեցի բարերարների, ԼՂՀ փրկարար ծառայության, Պատարայի միջնակարգ դպրոցի տնօրենության աջակցությամբ, պատարեցի երիտասարդներ Ստեփան Գրիգորյանի (պատմաբան) և Տաթևիկ Ջիանգիրյանի (էկոլոգ, Հայաստանի ազգային ազդարարյին համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի ասիստենտ, «Արցախի երիտասարդության զարգացման կենտրոն» ՀԿ բնապահպանական ծրագրերի համակարգող) ղեկավարությամբ:

Ճամբարի շուրջ 50 մասնակիցներն ընտրվել էին նախապես հայտարարված մրցույթով: Ճամբարին մասնակցում էին երիտասարդներ Պատարայից, հարևան գյուղերից, Արցախի տարբեր մասերից և ՀՀ-ից: «Էկո-Պատարա» ճամբարի նպատակն էր վերհանել համայնքում առկա

բնապահպանական խնդիրները, մասնակիցներին ծանոթացնել տեղի պատմական արժեքներին, առկա խնդիրների համար որոնել լուծման ուղիներ, երիտասարդության շրջանում տարածել էկոմտածելակերպ, սերմանել կայուն զարգացման գաղափար և ապրել բնության հետ ներդաշնակ:

Ճամբարը կազմակերպվեց Պատարա-



յուն, քանի որ էկոլաբ ծրագրի նպատակներից էր նաև այն, որ ծրագրի մասնակիցներից յուրաքանչյուրն իր համայնքում իրականացնի էկոլոգիական նախագիծ և դրա միջոցով բնակչությանը իրազեկի առկա բնապահպանական խնդիրներին: Կազմակերպիչների կողմից հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ Պատարայում կան 8 հուշարձանախումբ և 10-ից ավելի բնական հուշարձաններ:

«Էկո-Պատարա» ճամբարի նպատակն էր բարձրացնել մասնակիցների բնապահպանական իրազեկության մակարդակը, տեղեկատվություն տալ կայուն զարգացման, պատմամշակութային արժեքների մասին:

Ստեփան Գրիգորյանը մասնակիցներին ներկայացրեց համայնքի պատմամշակութային արժեքները, խոսեց դրանց կարևորության մասին:

Իսկ Տաթևիկ Ջիանգիրյանի կողմից ներկայացվեցին Պատարայի էկոլոգիական խնդիրները, կայուն զարգացման գաղափարը: Սեմինարներն անցկացվեցին հարց ու պատասխանի ձևով՝ մասնակիցների ակտիվ մասնակցությամբ, որոնց կողմից ցուցաբերվում էր մեծ ակտիվություն և հետաքրքրություն քննարկվող թեմաների վերաբերյալ: Կազմակերպվեցին նաև արշավներ դեպի Պատարայի գեղատեսիլ վայրերը, որտեղ տեսան պատմամշակութային կոթողներ, և հենց տեղում կազմակերպվեցին ինտերակտիվ սեմինարներ՝ «Բնությունը և նրա կոմպոնենտները» թեմաներով:

Ճամբարում կազմակերպիչները մեծ ուշադրություն էին դարձնում թիմային աշխատանքին:

Քանի որ ճամբարն ուներ էկոլոգիական ուղղվածություն, այդ երեք օրերի ընթացքում օգտագործվեց էկո-սմունդ:

Ճամբարի ընթացքում կազմակերպվեցին սեմինար, մարզական խաղեր, էքսկուրսիա, բնապատմական հուշարձանների մաքրման աշխատանքներ:

Վերջում մասնակիցները պատրաստակամությամբ հայտնեցին այսուհետ լինել ավելի հոգատար բնության հանդեպ, խնայողաբար և ճիշտ օգտագործել բնական ռեսուրսները, զմահատել պատմամշակութային արժեքները, ունենալ էկոլոգիական մտածելակերպ և վարքագիծ:

Տեղին է հիշել պատմավիպասան Բաֆֆու խոսքը. «Չկա հայրենասիրություն՝ առանց հայրենագիտության»:

«Էկո-Պատարա» ճամբարի կազմակերպչական խումբ

Շնորհավորանք ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԵՌԱՆԴՈՒՆ



Բուրյեց Գայանե Գալստյանի ծննդյան 60 տարին, որից 30-ը նա մվիրել է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վեհ գործին:

Միշտ ժպտերես, միշտ բարյացակամ, միշտ գեղեցիկ ու եռամդուն. այսպիսին է հ. 7 դպրոցի դաս-

վար Գ. Գալստյանը:

Ծնվել է 1953թ. օգոստոսի 17-ին, Գորիս քաղաքում: 1976 թվականին ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղը և ստացել մաթեմատիկայի ուսուցչի որակավորում:

Նույն 1976թ. աշխատանքի է ընդունվել Ասկերանի շրջանի Կարմիր գյուղի 8-ամյա դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի:

1999 թվականից աշխատում է մայրաքաղաքի հ. 7 հիմնական դպրոցում՝ որպես դասվար:

Գ. Գալստյանը աշխատել է տարբեր մանկավարժական կոլեկտիվներում, որտեղ էլ միշտ վայելել է կոլեկտիվի սերն ու հարգանքը:

Գայանե Գալստյանը իր գործի նվիրյալն է: Նա աշխատում է անձնվիրաբար ու ոգևորված: Նրա վարած դասերն ուսանելի են, բովանդակալից, նորովի ու հետաքրքիր: Սաների համար նա բացահայտում է շատ գաղտնիքներ, մաթեմատիկան նրանց համար դառնում է խաղ:

Նա երիտասարդ ուսուցիչների անշահախնդիր բարեկամն ու օգնականն է: Եվ իր հարուստ փորձը սիրով փոխանցում է նրանց:

Գայանե Գալստյանը նաև ընտանիքին նվիրված մայր է, սիրասուն տատ, օրինակելի քաղաքացի:

Սիրելի գործընկեր, մաղթում ենք անսպառ եռանդ, առողջություն: Թող ժպիտը միշտ շողա քո գեղեցիկ դեմքին:

Ստեփ. Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԱՆՄԱՑՈՐԴ ՍԻՐՈՎ ՈՒ ՆՎԻՐՈՒՄՈՎ



Դպրոցին ու մասնագիտությանը նվիրված այս բարեհամբույր ուսուցչուհին բուրյեց իր կյանքի 60-րդ գարունը:

Էլմիրա Օհանջանյանը ուսուցչի տքնաջան ու դժվար աշխատանքին զուգահեռ՝ երկար տարիներ կատարում է ուսումնադասական աշխատանքների գծով փոխտնօրենի պարտականությունները: Մեծ աշխատասիրությամբ, պատասխանատվության բարձր զգացումով օժտված, ընկերների սերն ու հարգանքը վայելող...

Քիմիայի մոզական աշխարհը նրա տարերքն է: Նրան հաջողվում է առարկայի նկատմամբ իր այդ սիրով վարակել սաներին: Հետևողական աշխատանքի շնորհիվ մեթոդական օգնություն է ցուցաբերում սկսնակ ուսուցիչներին, իսկ մյուսներից պահանջում մանկավարժական նորարարությունների կիրառում բոլոր դասերին:

Հարգարժան հոբելյար, շնորհավոր ծնունդդ, թող որ միշտ վայելես վաստակած մարդու բերկրանքը:

Սպիտակաչենի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՇԵՓՈՐԸ ՇՆՉՈՒՄ ԵՐ ԻՆՆԻՆ

2010 թվականից սկսած՝ «Թեքեյան կենտրոն» հիմնադրամը տարին մեկ հերթափոխով կազմակերպում է ակտիվ հանգիստ Վանաձորի «Գուգարք» մանկական ճամբարում Վահան Թեքեյանի անունը կրող երևանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբիի և Արցախից բերձորի հ. 1 հանրակրթական դպրոցների 9-12-րդ դասարանների առաջադեմ աշակերտների համար: Վերջերս բերձորից 13 աշակերտ զինղեկ Սամվել Պապիկյանի և մաթեմատիկայի ուսուցչուհի Անահիտ Հարությունյանի ղեկավարությամբ մեկնեցին Վանաձոր քաղաքի մոտակա Գուգարք գյուղ, որտեղ 1958 թվականից գործում է համանուն ճամբարը: 1978 թվականից այն տնօրինում է մանկավարժ Սեյֆուլինա Դանիելյանը: 1988-ին վնասված Սեյֆուլինա ճամբարի մասնաշենքերը, և միայն 1994-ից վերստին բացվում են ճամբարի դռները մանուկների առջև:

Ներկայացնում ենք բերձորից ճամբարական Անահիտ ԸՌԹՈՅԱՆԻ թղթակցությունը ճամբարից:

Հետաքրքիր ուղևորությունն սկսվեց Բերձորից: Դուրս գալով մեր շրջանից և անցնելով Այուրից, Վայոց ձորի, Գեղարքունիքի մարզերով՝ հասանք Տավուշի Դիլիջան քաղաքը, որտեղից ճանապարհն անցնում էր գեղեցիկ անտառի միջով: Մաքուր օդ, պայծառ երկինք. ահա ինչ է պետք մարդուն իր հանգիստն ապահովելու և հետաքրքիր հիշողություններ ունենալու համար: Գնում էինք սպասումներով, պատկերացումներով, որոնք կապված էին «Գուգարք» մանկական ճամբարի հետ: Բուրյեցի հետաքրքրում էր ամեն թուփ, ամեն ծառ, անգամ օդի բույրը, որն ամեն մեկս յուրովի էինք գործում: Ամենատարվորիցն այս պահին էր, երբ ոտք դրեցինք այդքան սպասված և բացահայտումներով լի ճամբարը: Ներս մտնելուն պես՝ մեզ դիմավորեցին ջերմ ու ժպտացող դեմքեր, փայլող աչքեր, որից մեր գրեթե փակվող աչքերից վերացավ հոգնածությունը: Ամեն ինչ տպավորիչ ու հետաքրքիր էր: Մի փոքր

հանգստանալուց հետո լսվեց շեփորի ծայրը, որը կանչում էր ճաշի: Մենք անմիջապես շարվեցինք, ծանոթացանք ճամբարի կարգ ու կանոնին և մյուս դպրոցների երեխաների հետ, ապա ամմիջապես բարձրացանք ճաշի: Այնուհետև ամեն դպրոց ընտրեց իր կարգախոսը: «Սաներն ենք մենք Արցախ աշխարհի, ոչ ոք իրարից մեզ չի բաժանի».

սա եղավ մեր կարգախոսը: Երեկոյան կազ-



մակերպեցինք խաղեր և առաջին իսկ վայրկյանից այնքան մտերմացանք, որ օրն առանց իրար չէինք պատկերացնում: Մեր երեկոներն անցնում էին ուրախ խաղերով և պարերով: Մեզ հետ էին Կարբիի, Ստեփանավանի, Երևանի, Գյումրիի Վ. Թեքեյանի անվան դպրոցների աշակերտները: Երբեք չեն մոռանա իմ նոր ընկերներին, այնքան ընդհանրություններ ունենինք...

Ամեն առավոտ շեփորը հնչում էր ժամը 9-ին և բուրյեց կանչում մարզանքի: Նման մի առավոտ էլ, փոքր հանգստից հետո, ավագ ջոկատավար ընկեր Արտակը մեզ ուղեկցեց Դեբեդ գետը, որտեղ ջրոցի խաղաղից, զմայլվեցինք բնության հրաշքներով: Մեկ ժամ անցկացնելուց հետո վերադարձանք: Հաջորդ օրը կազմակերպեցինք արշավ դեպի լքված ճամբար: Մեր ջոկատավարն էր Ս. Պապիկյանը: Ուղևորությունն

անցավ ուրախ, երգերով: Հասնելով լքված ճամբարը՝ մեզ ներկայացրին նրա պատմությունը, ապա սկսեցինք երգել: Մեր ջոկատը կատարեց Արցախի հիմնը: Նույն օրն այցելեցինք քարանձավ, ապա վերադարձանք ճամբար: Հաջորդ օրը կազմակերպվեց մրցույթ-վիկտորինա, որտեղ Արցախի թիմը գրավեց առաջին տեղը: Յուրաքանչյուր օր կազմակերպվում էին սպորտային խաղեր: Այցելեցինք նաև Դեղ՝ Հովի. Թունանյանի տուն-թանգարան: Այնտեղ մեզ պատմեցին Թունանյանի մասին, ցույց տվեցին նրա անձնական իրերը, աշխատասենյակը:

Երբեք չեն մոռանա ճաշարանի համեղ ուտեստները, որոնք խոհարարները պատրաստում էին մեծ ոգևորությամբ, մեր ուրախ արշավները, խաղերը, հուժկուները, անգամ մեր վեճերը, որոնք ծագում էին մանրուքներից և հարթվում մի ակնթարթում: Կհիշեն նաև այն խոսքերը, որոնք ամեն երեկո՝ քնից առաջ, բոլորս կրկնում էինք. «Ճամբարը մեր տունն է, մենք ենք նրա տերը»: Այս խոսքերն, իրոք, պարտավորեցնող էին: Կհիշեն, թե ինչպես էինք լսում մեկս մյուսի անգամ ոչինչ չասող խոսքերը, փորձում ամեն մի վայրկյանն ուրախ անցկացնել:

Իսկ վերջին երեկոն բոլորս հավաքվեցինք ու սկսեցինք երգել: Ընկեր Արտակը մեզ համար երգեց և կյանքի խորհուրդներ տվեց: Ինչպես չէինք ցանկանում բաժանվել իրարից, ամեն վայրկյան կրկնում էինք. «Մենք մի ընտանիք ենք»: Փաթաթվում էինք իրար ու քաղցր խոսքեր ասում: Այդ գիշեր մենք չքնեցինք և լուսաբացը դիմավորեցինք միասին: Ափսոս, որ այդքան շուտ ավարտվեց ամեն ինչ: Չնայած մենք 7 օր էինք իրար հետ, բայց կարծես մի ամբողջ կյանք ճանաչել էինք իրար: Բաժանվեցինք թաց աչքերով, բայց ուրախ սրտով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Ք. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ՇԱԴՈՒՅԱԼԻ ՇՐՋԱՆ

1. Խ. Աբովյանի անվան հ. 1 հիմնական դպրոց - դաստիարակ -1 հաստիք, դասվար -20 դասաժամ
2. Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոց - դաստիարակ - 2 հաստիք
3. Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոց դաստիարակ -1 հաստիք (ռուսերենով ուսուցմամբ դասարանի համար)
4. Գ. Բալասանյանի անվան հ. 5 հիմնական դպրոց - դաստիարակ -1 հաստիք
5. Գ. 6 հիմնական դպրոց - դաստիարակ -1 հաստիք
6. Գ. Թումանյանի անվան հ. 9 հիմնական դպրոց - դաստիարակ -1 հաստիք, օտար լեզվի (ֆրանսերեն) ուսուցիչ - 6 դասաժամ
7. Ավ. Իսահակյանի անվան հ. 10 հիմնական դպրոց - դաստիարակ -2 հաստիք
8. Գ. 12 հիմնական դպրոց - երաժշտության ուսուցիչ - 6 դասաժամ
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի կիրակի օրից, համապատասխան դպրոցներում:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
Դաստիարակի թափուր տեղի մրցույթի համար հայտ կարող են ներկայացնել ինչպես դաստիարակի, այնպես էլ 1-4-րդ դասարանների դասվարի որակավորում ունեցող մանկավարժները:
Մրցույթները տեղի կունենան օգոստոսի 25-28-ն ընկած ժամանակահատվածում. մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ

Թալիշի մ/դ Մաթեմատիկա - 20 ժամ
Գետավանի մ/դ Պատմություն - 6 ժամ, ֆիզկուլտուրա - 15 ժամ
Քոլատակի մ/դ Ֆիզիկա - 12ժ, Քիմիա - 9 ժ, Կենսաբանություն - 10ժ, Պատմություն - 13ժ, Օտար լեզու (անգլերեն) - 14ժ, զինղեկ - 1 հաստիք

ՇՈՒԵՒԻ ՇՐՋԱՆ

Եղծահողի մ/դ Մաթեմատիկա - 14 ժ., Ֆիզիկա - 7ժ, Քիմիա-6ժ, Կենսաբանություն - 8ժ, Պատմություն - 9ժ, Ռուսաց լեզու -13ժ, զինղեկ - 1 հաստիք
Մեծ շենի մ/դ Քիմիա-6ժ, Կենսաբանություն -6ժ, Պատմություն -17ժ, Աշխարհագրություն - 7ժ, 13ժ, Ֆիզկուլտուրա -18ժ, զինղեկ - 0.5 հաստիք
Հին շենի մ/դ Դասվար-20ժ
Լիսագորի մ/դ Ֆիզիկա-7ժ

ՄԱՐՏՈՒՆԻ ՇՐՋԱՆ

Ջիվանիի հ/դ Մաթեմատիկա - 20ժ
Թաղավարդի մ/դ Ռուսաց լեզու - 6ժ

ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ

Ծաղկաշատի հ/դ Քիմիա - 6ժ, Կենսաբանություն - 8ժ,
Պատարայի մ/դ Ֆիզիկա -7ժ
Նախիջևանիկի մ/դ Ռուսաց լեզու - 6ժ

Նոր Բրաջուրի մ/դ զինղեկ - 1 հաստիք
Նոր Գետաշենի մ/դ Քիմիա-կենսաբանություն - 11ժ, Ֆիզկուլտուրա - 6 ժ
Դաղիվանքի մ/դ Օտար լեզու (անգլերեն) - 10 ժ, Քիմիա, կենսաբանություն - 11 ժ, Ֆիզկուլտուրա - 12 ժ
Եղեգնուտի Ֆիզիկա -13 ժ, Աշխարհագրություն - 8 ժ, Հայոց եկեղեցու պատմություն - 6ժ
Չուարի մ/դ Ռուսաց լեզու - 11 ժ
Նոր Երեջի մ/դ Չինղեկ - 1 հաստիք, Աշխարհագրություն - 8ժ, Ռուսաց լեզու - 16ժ
Նոր Խարխափուտի հ/դ Դասվար - 20 ժ
Շարի հ/դ Մաթեմատիկա, ֆիզիկա - 12ժ, Աշխարհագրություն, պատմություն- 11ժ, Հայոց լեզու - 10ժ
Հավասթաղի հ/դ Օտար լեզու (անգլերեն) 8ժ, Քիմիա, կենսաբանություն - 8ժ
Նոր Դարաշինարի մ/դ Մաթեմատիկա - 19ժ
Նոր Մանաշիղի հ/դ Ֆիզիկա, ինֆորմատիկա - 11ժ, Աշխարհագրություն - 7ժ, Պատմություն - 19ժ, Օտար լեզու (անգլ.) - 12ժ, Ռուսաց լեզու-16ժ
Չարեքտարի մ/դ Ֆիզիկա, ինֆորմատիկա - 11ժ, Աշխարհագրություն - 8ժ, Մաթեմատիկա - 19ժ, Օտար լեզու (անգլերեն) - 14ժ, Ֆիզկուլտուրա, - 15ժ, Դասվար - 22ժ
Նոր Վերինշենի մ/դ Ինֆորմատիկա - 6ժ, Հասարակագիտություն - 6ժ, Մաթեմատիկա - 28/ժ, Օտար լեզու (անգլերեն) - 16ժ, Դասվար - 20ժ

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր, ըստ ԼԴՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 25-26 համարում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
1. Հանձնաժողովի ամունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատետեղը, որին հավակնում է: (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատետեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ԼԴՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
Մրցույթները տեղի կունենան սեպտեմբերի 1-5-ը ընկած ժամանակահատվածում, մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԴԱԴԻՎԱՆՔ ԿԱՄ ՆՈՐՕՐՅԱ ԱՂՈԹՔ

Դաղիվանք...
Նայում են խուփին հպարտորեն բազմած ձեռակերտ իրաշքին և գոհանում, որ Մեծ Հայքի Արցախ նահանգի Ծար գավառի այս վտեմաշուք վանքը այսօր ինքնավարություն ունեցանք նաև մենք՝ Մարտունու շրջանի Ղուզե ճարտար գյուղի Արա Ավանեսյանի անվան հիմնական դպրոցի մի խումբ ուսուցիչներ, դպրոցի գերագանցիկ և հարվածային աշակերտները և առարկայական օլիմպիադաներում ու տարբեր մրցույթներում մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտները:
Այցելեցինք Դաղիվանք և մեր հոգուց բխած աղոթքը հղեցինք առ Աստված.
«Փառքը շատ, Տե՛ր Աստված, 20-րդ դարի անդառնալի ու թանկ կորուստներից հետո դարավերջի այս վերագտած պարզևի համար...»:
«Շնորհակալ եմ, Տե՛ր, որ անկուշտ գազանի ամենակուլ երախից կարողացանք խլել այս սրբատուրք մատուցելը»:
«Տե՛ր իմ, սա մեր կորուսյալ դրախտի մի փոքրիկ հատվածն է: Խնդրում եմ ուժ ու հավատ ներշնչիր ազգիս, որ կարողանանք հավատալ նորանոր իրաշքերին...»:
Նայում են թարթառի կատաղի ալիքներին, հիանում ու հմայվում: Այն իմ երկրի ուժն է անբարուն իր մեջ և կյանք է պարզուն շրջա-

պատող անտառին: Իսկ անտառը... իրաշք է: Թվում է՝ եթե մտնես նրա խորքերը, կհասնես դարերին և կպեղես պատմությունը մի ժողովրդի, որ անհիշելի ժամանակներից ապրել է այս իրաշք հողում:



Ոլորապտույտ ճանապարհը Դաղիվանքից մեզ տարավ դեպի Գանձասար: Անցանք Մարտակերտի վերավոր գյուղերի միջով ու տեսանք, որ մարտակերտցիները բույնը գտած ծիծեռնակի պես նորոգում է իր տունը, շենաց-

նում իր այգին, պեղում հարազատ երկրի ընդերքը, որպեսզի շտկի կորացած մեջքը, հպարտ մայի աշխարհին:
Գանձասարի հայացքի ներքո՝ Վանք գյուղի կողքին տեղակայված հանգստի գոտում, ըմբռնվածքները Աստուծո տված մի կտոր հացն ու այլ բարիքներ և գոհունակությամբ ճանապարհիվեցինք դեպի ճարտար:
Կարճատև տեղատարափ անձրևը մեզանից տարավ ճանապարհի փոշին ու հոգնությունը, և իրիկնադեմի մայր մտնող արևի վերջին շողերի տակ մենք մեր վերջին աղոթքը հղեցինք առ Աստված.
«Շնորհակալ եմ, Տե՛ր, այս ամառային գեղեցիկ ու հետաքրքիր օրվա, մեր ուխտագնացության համար: Այն հայրենասիրության ու հայրենաճանաչության մեծ դաս էր բոլորիս համար»:
Թող քո աջը զորավիգ լինի բոլոր նրանց, ովքեր Դաղիվանքի հայացքի ներքո ապրում ու շենացնում են երբեմնի շեն ու ծաղկուն գյուղերը, ովքեր «գիժ» Թարթառի երախից

հող են փրկում ու ծաղկուն այգի դարձնում քարաստանը...
«Տե՛ր իմ, արևաշատություն ու երկար կյանք պարզևի երկրիս թև ու թիկունք կանգնած բարեբարներին, նրանց մեջ՝ մեր դպրոցի գլխավոր հովանավոր Աշոտ Ջիվանյանին, ում օժանդակությամբ ամեն ուսումնական տարվա վերջում մեր դպրոցի աշակերտները նման հետաքրքիր էքսկուրսիաների են մասնակցում»:
«Ամենակարող Տե՛ր իմ, պահպան եղիր երկրիս սահմանը հսկող զինվորին: Թող նրա սուրը կռի նորանոր հաղթանակներ, իսկ մեր աշակերտները դառնան արժանի հետնորդներ և վստահորեն հավատան, որ երբեք չենք թերթի մեր պատմության վերջին էջը»:
Ոլորապտույտ ճանապարհը կեսգիշերին մոտ մեզ բերեց հասցրեց Ղուզե ճարտար: Իսկ իմ շուրթերին վերջին խնդրանքս էր. «Տե՛ր իմ, երանի՛ երկրիս մի սահմանից մյուսն անցնելու համար պահանջվեին ոչ թե ժամեր, այլ...»:

Օֆիկ ՍԱՐԳՍՅԱՆ
Ղ. Ճարտարի Արա Ավանեսյանի անվ. հիմն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ռաուցչուիկ

ԼՈՒՍԱՐԱՐ
Խմբագիր՝
ՍԿԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հիմնադիր՝
«Լուսարար» ՓԲԸ
Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուտ» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 22.08.2013թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: